

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ազգային, Գրական, Քաղաքական, Գիտական

53^{րդ} ՏԱՐԻ, Դ. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 37

13 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1903

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մեր վարժուհիները. ՋԱՊԷԼ, ԵՍՍՅԵԱՆ.— Ուրուագիծներ— Վայրկենական. «Զինք-Սա-
րափ». ԳԱՄԷԼ :— Նօանցումները. ԲԻԻԶԱՆԹԷՄ :— Նուերներս (Բանաստեղծութիւն) ԲԱ-
ԹԻԼ ՄԷՆՏԷՍ. Թարգմ. ՓԱՅԼԱԿ, — ձերմակներու առուսուր (Ամերիկա սարուած հար-
սընցումներու առթիւ) ՄԷԲՍԷՏԷՍ.— Ժամացոյցը (Բանաստեղծութիւն) Վ.— Լիլիեն Մորիս
(Վեպ) ՀԷՆՐԻԲ ՍԷՆԲԵԻՎԻԶ. Թարգմ. ԶԻՖԹԷ-ՍԱՐԱՅ :

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԱՍԻՍ Շաբաթաբերթի տարեկան բաժանորդագրին է Կ. Պոլսոյ համար հառսուն դրո.
եւ գաւառներուն համար յիսուն դրո., կանխիկ վճարելի : Արտասահման՝ 12 Ֆրանկ կամ
5 րուպի : Թղթաստեղծական ծախքը տարեկան վճարելի : Վեցամսեայ բաժանորդագրու-
թիւն չի տրուիր : Բաժանորդագրութիւնները կը սկսին ամէն ամսոյ մէկին : ՄԱՍԻՍ
հրատարակելիք ամէն շաբաթ առտու : Այն բաժանորդները որոնք պակաս քերք ստացած
են, պարտաւորուած իմացնեն տարեկան : Ժամանակ անցնելէ վերջ՝ այս տեսակ առաւ-
ելութիւն չի տրուիր : Երկարատեւութեան չեն առնուիր :

Զի հրատարակուած ձեռագիրները եւ չեն դարձուիր :

ՄԱՍԻՍԻ մէջ կ'ընդունուին նաեւ ծանուցումներ, դիւրամասշտիկ պայ-
մաններով :

Զեմ-ԲԷ ԿԸ ԾԱԽՈՒԻ ՀԱՏԸ ՔԱՌՍՈՒՆ ՓԱՐԱՅԻ

Հասցէ

درعليه ده غلطه ده (ماسيس) غزته سى اداره سى

ԽՐԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԱՍԻՍԻ

Կ. Պոլս, Ապրաքիա

Rédaction de la Revue MASSIS

Galata, Constantinople

S U Ն Ե Ր Ը Ն ՈՒ Թ Ի ՈՒ Ն Ը

զաւակներուն աչաց պայծառութիւնով կը կայանայ. երբ անոնց աչքը կը դունաւորի, մտածմունքի և նեղութեան պատճառ կը լլայ: Եթէ պայպէս տկարացած տղա մը



SCOTT'S EMULSION

տըռի՝ առողջութիւնը շուտ մը կը վերականգնայ և մտածմունքը կը դադրի: Աւանդի Ըօգօթի Բաղադրութեան հիւանդութեանց դէմ կը դնէ, և զաղայքը զօրաւոր մեծնայ: Կ'օգտէ և անոնց աչքերը փայլուն և զուարթ կը պահէ. փշա-

Ը Ս Գ Օ Թ Ի Բ Ե Ղ Ը Գ Բ ՈՒ Թ Ի ՈՒ Ն

պահելու է. Ասիկայ զԶեզ և Չեր զաւակները գիշեր ու ցաւերէ և յուսահատութիւններէ կը փրկէ: Ուշացող պէտք է ըլլալ որ շիշը վրան պսա նշանով վարդաշէն փոթիկով բաւարար մէջ է—եթէ կ'առնէք

Ը Ս Գ Օ Թ Ի Բ Ե Ղ Ը Գ Բ ՈՒ Թ Ի ՈՒ Ն

փժշկութիւն առած կ'ըլաք:

Շիշերու փայ ասոր ուշագրութիւն ընել պէտք է:

22

Բոլոր բեղաւորները և բեղաւորները ինքնին:

ԱՄՐԱՆ ԱՌԹԻԻ

‘ AU TALON D'OR ’ Օ ԹԱԼՈՆ ՏՕՐ

ԲԱՐԻՋԵԱՆ ԿՕՇԻԿՆԵՐՈՒ ԳՈՐԾԱՐԱՆ

ԳԱՌԼՕ ԱԶՆԱՄԵԱՆ

ՀԱՅ ԿՕՇԿԱԿԱՐ

ՊԱՏՐԱՍՏ ԵՒ ՉԱՓՈՒ ՎՐԱՅ

ԱՐԱՆՑ ԵՒ ԿԱՆԱՆՑ ՀԱՄԱՐ

Նաեւ կ'աղերս համար պատրաստուած

Կալաքա, Վոյվոճա փողոց, քիւ 103

Ճաշակաւոր ու վերջին նորաձեւութեան համաձայն կոշիկներու յանձնարարութեան համար,—մանաւանդ չափու վրայ շինուելիք,—կ'արժէ անգամ մը այցելել սոյն վաճառատունը:

Կըսեն թէ ամառը որ եւ է սառուցեալ ըմպելի կը զովացնէ, իսկ քիչը կը քրանցնէ մարդը:

Փորձեցէ՛ք եւ պիտի տեսնէք թէ այդպէս ըսողները կը սխալին:

Գնեցէ՛ք Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ եւ Յ. ԻՍԱԿՈՒԼԵԱՆԻ Չինաստանէն, Հնդկաստանէն, Ճափայէն եւ Սէյլանէն ուղղակի բերել տուած քաւմ, հոսաւեհ եւ առողջարար թէյերէն, համողութեցէ՛ք մեր ըսածին եւ զովացէ՛ք ամառուան տաք օրերուն:

Միշտ ուշադրութիւն մեր վաճառանիչին:

Կ. Պոլիս, Պահճէ Գափու, Ճէլալ պէյ խան, թիւ 10:

Մասնաձեւղեր Թուրքիոյ գլխաւոր քաղաքներուն մէջ, նոյնպէս Նգիպաս:



Կ. Պոլսոյ մէջ՝ Մասիսի հին թիւերէն գնելու պէտք ունեցողները կրնան գլխիկ կամ մուրջին գլուխը լրագրավաճառ Միսաք աղային:



ՌՕՍԻԱ - ROSSIA

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ



ՀՐԴԵՀ, ԿԵԱՆՔ, ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆՔ, ԱՐԿԱԾՔ

1881 մարտ 20ի Կայս. Ուժազուլ արտօնուած

Կեդրոնատեղին Բեդերսպուրկ, իրեն յատուկ չէնքը:

Ընկերութիւնը խիստ նպաստաւոր պայմաններով ապահովագրութիւններ կ'ընդունի ԿեԱՆՔի վրայ, եւ ՀՐԴԵՀի, ՓՈԽԱԴՐՈՒԹԵԱՆ ՎՏԱՆԳՆԵՐՈՒ, ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՐԿԱԾ-ՆԵՐՈՒ ԴԵՄ. ցկեանս ապահովագրութիւն ՇՈԳԵՆԱՌՔՈՎ ԵՒ ՇՈԳԵՆԱՌՈՎ ՈՒՂԵՒՈ-ՐՈՒԹԵԱՆ ԱՐԿԱԾՆԵՐՈՒՆ ԴԵՄ, ինչպէս նաեւ ՀԱՅԵԼԻՆԵՐՈՒ ԵՒ ԱՊԱԿԻՆԵՐՈՒ Կոտ-րուելուն դէմ:

Ընկերութեան դրամագլուխը, ամբողջապէս վճարուած	10,666,667	Փրանք
Երաշխաւորութեան գումար աւելի քան	137,300,000	»

Ընկերութեան ապահովագրողներուն վճարուած դրամա-գլուխ եւ փաստաց հատուցում	282,000,000	»
--	-------------	---

1902 տարւոյ մէջ գանձուած ապահովագրին եւ տոկոս	54,000,000	»
---	------------	---

Ամէն տեսակ տեղեկութեանց համար դիմել Կ. Պոլսոյ մասնաճիւղին, Ազարեան խան, Վոլվոտա, Ղալաթիա, — եւ Ղալաթիոյ Գործակալութեան, Էսկի Կէօմրիւք խան, Քարափին վրայ:

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՎԱՐԺԱՐԱՆ

ՊԱՐՏԻՉԱԿ

Վարժարանիս նպատակն է տալ միջնակարգ, հիմնական կրթութիւն մը, հետեւելով Անգլիական ու Ամերիկեան նոյնօրինակ Հաստատութիւններու (High School) ծրագրին: Նոյն ատեն ալ, սակայն, նկատի առնելով երկրին պահանջները՝ մասնաւոր խնամք կը տարուի տոհմային ու Պետական լեզուներու եւ գրականութեան, ինչպէս նաեւ ֆրանսերէնի: Ամենէն պզտիկ կարգերէն սկսելով՝ կարգ մը դասեր կ'աւանդուին անգլիերէն լեզուով, որպէս զի բոլոր աշակերտները կանուխէն ընտելանան Անգլիերէնի: Տնօրէնը Տօքթ. Չէյ-Կրրս կ'աւանդէ տոմարակալութեան դասը, որ մասնաւորապէս կը յարմարցնէ ընթացաւարտները գործնական կեանքի: Առողջապահութեան դասը կ'աւանդէ վարժարանին բժիշկը որ միանգամայն մօտէն կը հսկէ բոլոր աշակերտներուն առողջութեանը վրայ: Գիտական ճիւղերու դասախօսութիւններն արգիւնաւորելու համար՝ վարժարանը ունի պիտանի ու աւհրաժեշտ գործիքներու ընտիր հաւաքածոյ մը:

Նորակառոյց նպատակայարմար չէնքը եւ նորաստաց ընդարձակ հողերը՝ ամէն ժամանակէ աւելի նպաստաւոր են աշակերտներու հանգըստութեան եւ առողջութեան, գեղը ըլլալով արդէն հանրածանօթ իր մաքուր ու դռն ու գեղեցիկ աեսարաններով:

Վարժարանիս վերաբացումը (24րդ տարեշրջան) տեղի պիտի ունենայ Սեպտեմբեր երեքին (Ն. Տ.): Տարեթոշակն է 16 օսմ. ոսկի: Աւելի մանրամասն տեղեկութիւններու համար դիմել անձամբ՝ Պայպըլ-Հաուզ, Կ. Պոլիս, կամ նամակով Տնօրէնութեան, Պարտիզակ:

ԱՄԵՐԻԿԵԱՆ ՎՍՐԺԱՐԱՆ ԻՒՍԿԻՏԱՐ

Ամերիկեան Վարժարանի յառաջիկայ տարեշրջանը կը սկսի 1903 Սեպտ. 15ին (Ն. Տ.): Գիշերօթիկներու տարեթոշակն է 35 օսմ. ոսկի Ուսումնարանին չորս դասընթացքներուն համար, իսկ 30՝ նախկըթարանին համար:

Տնօրէնութիւնը ջանք չէ խնայած վարժարանը ամէն առաւելութիւններով օժտելու: Լաւագոյն դրութիւնով եւ մեծ յաջողակութիւնով կ'աւսուցուն Հայերէն, Փրանսերէն, Անգլիերէն, Գերմաներէն եւ դասական լեզուները, ինչպէս նաեւ բնական գիտութիւններ:

Հմուտ եւ վարժ հիւանդապահուհի մը աշակուրջ հսկողութիւնը կը վայելեն աշակերտուհիները եւ կ'ապրին խաղաղ ու բարեկարգ մթնոլորտի մը մէջ:

Աւելի տեղեկութիւններու համար դիմել վարժարանին Տնօրէնուհի Տր. Փէթրիքի:

Ի Ի Ն Ի Օ Ն

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆՍՅ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ

ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ԲԱՐԻՁ 1828 - 1829

Հ Ր Դ Ե Հ Ի Զ Ի Ի Ղ

Մինչև 1899ի վերջը հատուցեալ վնասք	240,000,000	Ֆր.
1899ին գանձուած ապահովագրին	19,500,000	»
Դրամագլուխ եւ պահեստ	105,000,000	»
Ապահովագրեալ դրամագլուխ	18,000,000,000	»

Կ Ե Ն Ս Յ Զ Ի Ի Ղ

Մինչև 1889ի վերջը հատուցեալ վնասք	99,000,000	Ֆր.
Ընթացիկ ապահովագրութիւնք	253,000,000	»
Դրամագլուխ եւ պահեստք	150,000,000	»

որ ընթացիկ ապահովագրութեանց գումարին հետ կը համեմատուի 60% — ինչ որ «Իւնիոն»ի ապահովագրելոց կ'ընծայէ հսկայ երաշխաւորութիւն մը ՈՐՈՒՆ ՆՄԱՆԸ ԿԱՐԵԼԻ ԶԷ ՓՏՆԵԼ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՁ ԳՈՐԾՈՂ ՈՒՐԻՇ ՈՐ ԵՒ Է ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՔՈՎ:

Արեւելքի համար մասնաւոր սակացոյց՝ գեղջեայ գինեւով: Նպաստաւոր պայմաններ անհամեմատ կերպով աւելի գերազանց քան ուրիշ որ եւ է ընկերութեան պայմանները: Շահաբաժիններու տարուէ տարի անմիջական վճարում, որով իւնիոնի ապահովագրուողք ԶԵՐԾ կն այն վնասներէն եւ յուսախաբութիւններէն, որոնց կ'ենթարկուին միշտ այն անձինք, որ շահաբաժիններու բարդման (accumulation des bénéfices) ՅՅՈՒԻ եւ ՎՆԱՍԱԿԱՐ դուրքեամբ գործող ընկերութեանց կ'ապահովագրուին:

Ընկերութեան դրամասունքն է ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԱՆԲԱՆ

ԹՈՒՐԿԻՅԱՆ ԵՒ ԱՐԵՎԵԼՔԻ ՏՅՈՐԷՆՈՒՅԻՆ

Պոլիս, Սուլթան Համադ, Բասաժ Քաթրենք Օղլու

Մասնաճիւղ՝ Ղալաթիա, Ինայէթ Խան, Գործակալ Միհրան Էֆ. Դաւիթեան:

Գործակալութիւնք Թուրքիոյ գլխաւոր քաղաքաց մէջ



ՅՈՎԱԿԷՓ ՊԱԼՊԱԼԵԱՆ

(ՄԵՂՐՈՒՆԻ)

ԱՍՏՄՆԱՐՈՅԺ

Մուգաֆէրիէ Հիւանդանոցին եւ

Պարսկական վարժարանին

Բերա, Մեծ Փաղոց, Թագսիմ, քիւ 61

Զբոսանքան աբառքման


Պալպալեան ամէն օր ալուայի ամէն տեսակ հիւանդութիւններով տառապողները կ'ընդունի. իսկ Ուրբաթ, Կիրակի եւ երեքշաբթի մինչեւ ժամը 5: Գիշերուան ո եւ է ժամուն կարելի է գիմել: Պալպալեան կ'երաշխաւորէ իր լեցուցած ու չինած ալուանները: Յորեկները ալուայ քաշել տալու համար որոշ վարձք մը չկայ. քաշել տուողին կամքէն կախեալ է:

Աղլաւանեաւն ձեռի

ԱՊԱՌԻԿ ՎԱՃԱՌՈՒՄ

ՀԵՐՃԱՅԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՎԵՐՋԻՆ ԳԻՆ



Եթէ կ'ուզէք ամէն տեսակ գոհարեղէններ ունենալ, աժան ու ճաշակաւոր, թէ՛ արեւելեան եւ թէ՛ եւրոպական ճաշակով պատրաստուած, ժամացոյցներ, արժաթեայ գաւազաններ եւայլն, դիմեցէ՛ք Պոլիս, Ոսկերչաց Շուկան, Մեծ-Սուղոց թիւ 13:

Հարիւրին 20 կանխիկ, մնացեալին համար 100ին 5 շաբաթական վճարում: Կանխիկ գնողին համար հարիւրին 5 զեղչ: Գործածուած գոհարեղէնները եթէ վնասուած չեն՝ 100ին 10 զեղչով եւ կ'առնուին. իսկ ապառիկ զբնողներէն՝ 100ին 15 զեղչով:

ՄԱՍԻՍ

53^{րդ} ՏԱՐԻ, Դ. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 37

13 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1903

ՄԵՐ ՎԱՐԺՈՒՅԻՆԵՐԸ

Մասիսի 32րդ թիւին մէջ մեր վարժուհիներուն վրայ եղած տեսութեան մը առիթով տարբեր կարծիքներ երեւան եկան օրաթերթերու մէջ. ընդունելով հանդերձ իւրաքանչիւրին մտածելու անկախութիւնը, — առիկա տեսակէտէ կախում ունի և խառնուածքի խնդիր է, — պարտական կը դգամ սակայն ինքզինքս պաշտպանելու իմ յօդուածս, քանի որ ինքերը ամբողջ դասակարգի մը, աշխատող ու անտեսող դասակարգի մը վրայ է մանաւանդ:

Այսպէս, կրնայ ըլլալ որ քիչ շատ բացառութիւններ դնուին, բայց ասոնք ընդհանուր օրէնք չեն կազմեր. իմ խօսքս բոլոր վարժուհիներուն համար էր. ես կը ներկայացնէի հայ վարժուհիին՝ անձնուէր, դորո՞վոտ, տաք—սրտով և բարի, յաճախ իր ուսերուն վրայ բեռցած ունենալով դպրոցի մը Տնօրէնութեան intriguեները, ճնշումները որոնց դէմ ասիպուած է պայքարիլ որքան որ իր տկար միջոցները կը ներեն:

Իր միջոցները տկար են. նախ որ բազմադասարան թերի դաստիարակութիւն մը առած է. ասոր յանցանքը իրը չէ սակայն. հազիւ թէ չըջանաւարտ նախակրթարանէ մը, աւելի լայն ժամանակ և միջոց չունի ինքզինքը զարգացնելու. եթէ բացառիկ ջանք մը ընէ, անմիջապէս Հոգաբարձութիւնը և Տեսչութիւնը ունի իր դէմ. երեւակայեցէ՛ք որ երբ արդէն 200 զրշ.ի ամսական մը կը վճարեն վարժուհիի մը, անոր բոլոր ժամանակը գրաւուի իրաւունք ունենալ կը կարծեն: Օրինակի համար, թաղային վարժարանի մը մէջ վարժուհիները երաժշտութեան մասնաւոր դաս կ'առնեն. իրենց ամսականին

վրայէն է որ կը վճարեն ուսուցչին ամսականը և տղոցը մեկնելէն ետքն է որ իրենց դասերը կը պատրաստեն ա'յնչափ սղութեամբ ըրեալ հանգիստի ժամերնին զոհելով. բայց երաժշտութեան ուսուցիչը չարթուն մէջ ժամ մը կուգայ դաս տալու և այդ ժամը պէտք է յատկացնեն իրենց վճարուած ժամերէն. ասոր համար է որ Հոգաբարձութիւնը խնդիր կ'ընէ, տեսուչը կը բողոքէ և կ'իմանամ որ եթէ անոնց մէջ չդաշնուէր անձ մը որ վարժուհիներուն երաժշտութեան դասը դպրոցին օգտակարութիւն մը ըլլալուն վրայ չպնդէր, պիտի ասիպուէին մասնաւոր ուսուցիչնին ձամբելու. ասոր մէջ յանցանքը որո՞ւն է. շատ դիւրին է վարժուհիներու նման տկար արարածները դատաւիտել, երբ մանաւանդ անոնք իրենց ձայնը չեն կրնար լսել ընել՝ անգործ մնալու վախով: Եթէ մինչև հիմա որ և է ջանք եղած ըլլար անոնց մօտաւոր և բարոյական վիճակը բարւոքելու և վարժուհիները յամառէին անոնցմէ չ'օգտուիլ, առաջին քարը ես պիտի նետէի. կը բաւէ քիչ մը պոտիլ թաղերուն մէջ, սպորիլ դպրոցական միջնորդներէն ներս, տեղեկանալ վարժուհիներուն հրաժարման կամ պաշտօնի բարձրայման պատճառներուն, անմիջապէս անդրադառնալու համար թէ վարժուհիները ընդհանրապէս բարոյական զոհեր են և անոնցմէ անո'նք կը յաջողին որ քծնիլ գիտեն, կեղծել գիտեն կամ բարեկամ մը ունին դպրոցին մէջ:

Կը պնդեմ թէ դոյութիւն ունեցած բոլոր այս անհաճոյ երեւոյթներուն միակ պատասխանատուութիւնը հոգաբարձուներուն վրայ կը ծանրանայ. անոնք վարժուած են ուսուց-

չուհին ստորադասեալ մը համարիլ, մէկը որ պէտք է ձայնը լսելի ընէ, որ խօսած ատենը պէտքէ կարմրի և չկրնայ ինքզինքը բացատրել, պահանջումները յայտնել: Դարձեալ, ուրիշ թաղի մը մէջ, երբ վարժուհի մը տարեմուտքին բացարձակապէս ըսած էր թէ իրեն տըրուած ամսականը անբաւական կը դառնէր և չէր կրնար այդչափով պաշտօն վարել, լոյրոր հոգաբարձուները շուարած՝ յանդիմա՝ եր էին այդ օրիորդը, որովհետեւ պարզութեամբ և առանց սեթեւեթի իր կարծիքը յայտնած էր. ու իրեն հասկցուցեր էին որ եթէ աղաչէր, պաշտօնէր, եթէ անուշ-լեզու մը գործածէր, թերեւս իր պահանջումը կատարէին. բայց այս միջոցով անկարելի էր ասիկա: Ասոնք իրողութիւններ են, երկու օր առաջ պատուհած, որոնք շատ լաւ կը բնորոշեն մեր թաղերուն ներքին բարոյական վիճակը. վարժուհի մը ի՞նչ ընէ այդ պարագային, կա՞մ պէտք է զիջանի կա՞մ դպրոցը ձգէ. այս երկրորդը պահանջելը անգուլթ խստութիւն մըն է իրենց համար. յաճախ անոնք պէտք ունին ապրելու կամ իրենց ընտանիքին օգնելու համար՝ այդ ղոլորմեքի գումարին, և կ'երեւակայէք որ ի՞նչ հերոսական համբերութիւն պէտք է անոնց ամէնքը կուլ տալու և իր կրթական պաշտօնին գլուխը անցնելու համար, դատապարտուած գրեթէ ամէն օր տեսնելու և քամակը ծռելու բոլոր անամիտ և հրամայելու ծիծաղելի բնադէներով տոգորուած հոգաբարձուներուն:

Կը դիտեմ որ երկու ընդդիմախօս յօդուածագիրներ, տարբեր թերթերու մէջ, վարժուհիներու աղքատ ընտանիքի դաւակ ըլլալը կը համարին իբրեւ աննշարար պարագայ մը. «ինչո՞ւ»ն չեմ կրնար հասկնալ. հարկաւ պէտք է որ դրամ հայթայթելու անհրաժեշտութեան մէջ ըլլան այդ աղջիկները որպէսզի զիջանին վերը յիշուած բոլոր յուսահատեցող և վարկաբեկող պայմաններուն: Եւ ասոր մէջ միմիայն սրբապետը կը երեւոյթ մը կը տեսնամ: Մ'հ, ժամանակ մը այսպէս չէր. աղջիկ մը որքան ալ աղքատ ընտանիքի պատկանէր, հանդարտիկ կը նստէր տանը անկիւնը, և առանց խղճի

խայթի, կ'ուտէր շատ անգամ իրեն ծերուկ հօրը տաժանքով վաստակած հացը. հազիւ թէ կը զիջանէր իր արդուդարդին օգնելու համար ձեռական մանր մունր գործեր ընել, սպասելով ամուսինի մը դոր պէտք էր որ դարձեալ ծնողքը ճարէին իրեն, օժիտը պատրաստէին իրենց ուժէն. վեր պարաքերու տակ մօնալով, և անգամ մը որ ամուսնանար, անկէ ետքը նոյն իրաւունքները կը վայելէր իր ամուսինէն. ասիկա քնական վիճակ մը կը նկատուէր և ո՛չ մէկը կ'ըզվէր ասոր դէմ. բայց բարքերը փոխուեցան և հիմա՝ երբ աղջիկ մը դեռ դպրոց կ'երթայ և կը տեսնէ իր ծնողքին ապրելու դժուարութիւնները, քնականաբար կը խորհի անձնական ջանք մը ընել, անոնց բարօրութեանը մասնիկ մը աւելցնել. ասիկա հիմնալի բան մըն է և արդէն իսկ կ'ապացուցնէ իրենց մէջ անձնութեան և զոհողութեան զգացումներուն գոյութիւնը. և ի՞նչ կ'ուզեն թող ըսեն, երբ աղջիկ մը այսքան խանդաղատանք և գորով կ'ունենայ սրտին մէջ իր ծնողաց համար, չկրնար տարբեր կերպով չարժիլ իրեն դատարարութեան յանձնուած տղոց հանդէպ. ես չեմ խօսիր ա'լ բոլոր անոնց վրայ որոնք լաւագոյն կացութենէ մը անախակալ չքաւորութեան մէջ յայնալով, առանց վարանելու մոռցած են մինչև այն ատենուան իրենց դիւրին կեանքը և գործի սկսած են չարաչար աշխատելով առտուընէ մինչև իրիկուն. չեմ խօսիր ընտանիքի մայրերուն վրայ որոնք այրի մնալով կամ տարբեր պատճառներով ստիպուած են իրենց զաւակներուն հացը հայթայթել... Կրնաք քննադատել ասոնց ձեռնհասութիւնը կրթական գործին մէջ, կրնաք միջոցներ ցուցնել և հայթայթել մանաւանդ այդ միջոցները կազմակերպելու համար զանոնք, բայց չեմ դիտեր թէ ինչպէ՞ս սիրտ կ'ունենաք զանոնք որակել բոլոր այն վարկաբեկող և ծիծաղելի անուններով (ինչպէս կը գործածէ յօդուածագիր մը) զորս պիտի վարանէի ես ամէնէն ապիկար վարժուհիին ալ ուղղել՝ եթէ անոր մէջ տեսնէի ամենադոյզն նշոյլը բարի տրամադրութեանց և լաւագոյնը ընելու տենջանքին: Ասոնք ան-

խորհուրդ և դիւրին խօսքեր են որոնց վրայ չեմ ուզեր ծանրանալ նոյն իսկ խնայելու համար այդ անխրաւ լուսանքներուն ենթարկուող վարժուհիներուն :

Թէ ինչո՞ւ աշխատելու կամք կամ պէտք ունեցող աղջիկները միմիայն վարժուհի կ'ըլլան և չեն ձեռնարկեր ուրիշ գործի, պատասխանը շատ սղարդ է. որովհետեւ ուրիշ ասպարէզ չկայ : Ես շատերը գիտեմ որ տարբեր բաներու յարմարութիւն և ձգտում կը դգան, բայց ի՞նչ կրնան ընել. կա՛ն որ չաբաջար կ'աշխատին իրենց առօրեայ դասընկերէն դուրս մասնագիտութեան մը հետեւելու համար, և արդէն ըսի թէ ի՞նչ կաշկանդումներու մէջէն. միւս կողմէ, խորապէս համոզուած են թէ ի՞նչ որ ալ ըլլան, ինչ որ ալ սորվին, նոյն վիճակին մէջ մնալու դատապարտուած են զրեթէ. եղա՞ծ է որ ամաղանի յաւելում մը ըլլայ աղջկան մը, որովհետեւ միւսներէն աւելի բան մը գիտէ. կամ իրենց մասնագիտութենէն օգտուելու փոյթ կ'ըլլա՞յ երբեք. նորէն օրինակի մը պիտի դիմեմ. թաղային վարժարանի մը մէջ դասնակի դաս հաստատուած է. բոլոր աշակերտուհիները՝ սկսնակներ են. նոյն վարժարանին մէջ կան արդէն մէկ—երկու վարժուհիներ՝ որոնք յարատեւութեամբ մշակած են այդ ճիւղը և իրենց ուսուցիչէն միշտ գնահատուած, կարող համարուած, նոյն իսկ մասնաւոր դասեր տալու. արդ, այդ դպրոցի Տնօրէնութիւնը փոխանակ օգուտ քաղելու իր ձեռքին տակ ունեցած կարող վարժուհիներէն, անոնց ամսականի յաւելումով մը եւ մասնագէտ ուսուցչի բարձրացնելով՝ զանոնք խրախուսելու, դուրսէն օտար վարժուհի մը կը բերէ :

Իրաւունք չունի՞ն դառնանալու այդ անվըականդ աշխատողները. բայց ես գիտեմ որ անոնք չուտով յուսահատողներ չեն և առանց փոյթ ընելու իրենց եղած անուղղակի անիրաւութեան, պիտի շարունակեն աշխատիլ նոյն իսկ արուեստին սիրոյն համար : Կը տեսնէք որ երբ անձեր կ'ըլլան որ նոյն իսկ կը զլանան մեր վարժուհիներուն անձնութեան, իրենց գործին գիտակցութեան ամե-

նատարական յատկութիւնները, ես կը զըտամ սակայն տիպարներ որոնք անկախօրէն իրենց գործէն (և ասոնք լաւ վարժուհիներ են արդէն) արուեստին սիրուն համար կը աքնին և նիւթական զոհողութիւններ կ'ընեն :

Երբ արդէն մօտաւոր անցելի մը դիմենք, ամէնէն յայտուն ապացոյցը պիտի ունենանք թէ մեր վարժուհիները կարծուած են շատ աւելի գիտակցութիւնը ունին իրենց գործին դժուարութեան ու մանաւանդ դարգանալու տենջանքը :

Կը բաւէ յիշել Տիկին Մատակեանի կիրակնօրեայ վարժարանը. եղած է որ 30—40 աշակերտուհիներ ամէն կիրակի զանազան թաղերէ եկած են իրենց շաբաթուան մէջ միակ հանգիստի օրը զոհել՝ սորվելու համար. եւ ասիկա ամառը, հեղձուցիչ տաքերուն, ինչպէս ձմեռը ցուրտին ու բուքին. անոնց մէջ անսպասուար աղջիկներ կային, ծակ կօշիկներով և մաշած հագուստներով, որոնք սիրով կը ծախսէին իրենց ստածանագլին աշխատութեան նիհար հասոյթը, կային որ չոր հաց մը անգամ չէին ուտեր ցորեկը՝ խնայելու համար : Մհ, ատարակոյս ասոնք աչք չլացնող երեւոյթ մը չունէին. կրնայ ըլլալ որ հագուստնին թափթիւած, մազերնին գէշ յարգարուած ըլլար, բոլոր աղքատ աղջիկներու պէս կ'ամբնային մէկու մը երեսը նայելու եւ իրենց շարժումները ձախորդ բան մը ունէին... Բայց կը բաւէր դիտել իրենց յոգնած նայուածքը և անարիւն չրթունքը, զրկանքներէ նիհարցած և աժդոյն երեւոյթը, որպէս զի մարդ քաջութիւնը չունենար զանոնք ծաղրելու. ընդհակառակը, որքա՛ն աւելի վեհանձն և մարդկային պիտի ըլլար ձեռք տալ մեր դժբաղդ և զրկուած քոյրերուն և անոնց ցուցնել ճամբան ուրիշ պէտք է քալեն՝ վրստահօրէն հասնելու համար իրենց կրթասիրական նպատակին :

Դարձեալ Տիկին Մատակեանի կիրակնօրեայ վարժարանը սլառճառ եղած է հաստատուելու թէ, երբ առիթը կը ներկայանայ, երբ որ և է միջավայր մը կը կազմուի, մեր վարժուհիները դիւրաւ կը թօթափեն զիրենք վատթարացնող պայմանները ու հաստատա-

քայլ կը պայքարին ձեռք ձգելու համար առաւելութիւններ որոնցմէ ամենէն առաջ տղայք կ'օգտուին :

Երբ կիրաւնօրեայ վարժարանը յաճախող օրիորդները բաւական վարժ չէին գործադրելու իրենց ստացած ուսումը, Տիկին Մատակեան կը փախաբէր անձամբ երթալ մանկապարտէզները գործնական դասեր տալու. թաղերը հեռաւոր են յաճախ և Տիկին Մատակեան չէր կրնար ճամբու ծախքն ալ վրայ տալ. դպրոցի տեսչութիւններու կը մնար ջնջին գումարի մը փոխարէն իրականացնել այդ առաւելութիւնը. բայց տեսչութիւնները չէին ուզեր, որովհետեւ... համակիր չէին Տիկին Մատակեանի. և արդարանալու համար մէջ կը բերէին պիւտճէներու աղքատութիւնը եւլն. արդ, եղան վարժուհիներ որ համաձայնեցան իրենց ամսականէն բան մը ղեղչել և գոյացած գումարով Տիկին Մատակեանը բերել տալ, խնամքով ծածկելով այս պարագան Մատակեանէն իսկ: Ասիկա միակ պարագայ մը չէր, մէկ քանի թաղերու մէջ տեղի ունեցաւ. գործը ինքնին կը խօսի և պէտք չկայ վայն դովելու. միայն կրնամ ըսել թէ այդ վարժուհիներէն ոմանք դեռ պաշտօնի վրայ են և երբ մեր վարժուհիներուն վրայ կը խօսինք՝ այդպիսի տիպարներ են որ կը ներկայանան մեզի :

Վերջապէս կարելի է թուել դեռ բազմաթիւ օրինակներ որոնք կրնան հաստատուել իմ լաւատեսութիւնս իրենց մասին. ասիկա ըսել է թէ ասիկաքներ և ինկածներ չկան. բայց ո՞ր ասպարէզին կամ դասակարգին մէջ եթէ փնտռուին՝ բացառութիւններ չեն ներկայանար: Յետոյ, պաշտօն մը իրեն յատուկ մոլութիւններ և առաքինութիւններ ունի և ես համոզուած եմ թէ գործին պատասխանատուութիւնը անգամ մը որ զիտակից դառնայ՝ պիտի մտքէ ուշ կամ կանուխ ամենէն ապականուածներն ալ :

Անոնք որ արդէն չատոնց գիտեն իրենց գործին դժուարութիւնները, որ յարատե ու դժուար ջանքերով տակաւ առ տակաւ կը ձգտին լաւագոյնին, պէտք չէ որ վիրաւորուին հրապարակաւ յայտնուած անիրաւ խօս

քերէն: Ասիկա, ընդհակառակը, թո՛ղ աւելի սրտապնդէ զիրենք և գլուխնին աւելի բարձր բռնեն իրենց կատարելիք դաստիարակական գործին մէջ: Մեր կրթական գործերուն մէջ ընկելիք չատ բան կայ եւ մեր յոյսը դրած ենք միմիայն ուսուցչան մարմնոյն վրայ: անոնք միայն պէտք եղած ձեռնհասութիւնը ու փորձառութիւնը ունին եւ պիտի ունենան նաեւ իրենց բարոյական գործին արժանապատուութիւնը եւ հպարտութիւնն ալ :

ԶԱՊԷՂ, ՆԱՍՏԵԱՆ

ՆՇԱՆՏՈՒՔՆԵՐԸ

Այն նշանուած զոյգերը որոնք Օրթոտոքս եկեղեցիին կը պատկանին, ապահովապէս դելին ժպիտով մը և տեսակ մը սիրտխաղով կարդացին այն ընդհանուր՝ բայց անողորմ չըջաբերականը որով իրենց Պատրիարքարանը խստիւ կը պատուիրէ իր հօտին՝ կարելի եղածին չափ կարճատեղ նշանուած մնալու սովորական և քաղցրանոյշ ժամանակամիջոցը :

Շաբաթ մը, տասնըհինգ օր, ամիս մը, չատ չատ երկու. այս պայմանաժամէն ետքը՝ խօսեցեալները պէտք է ամուսնանան, առաջըր առնելու համար—կ'ըսէ չըջաբերականը—այն խել մը անպատեհութիւններուն որոնք ընդհանրապէս արդիւնք են երկարատե նշանածութեանց, անպատեհութիւններ որոնք սրտակի բացատրուած չըլլալնուն համար մութին մէջ կը մնան և որոնց վրայ լոյս տրուելու համար Ֆէնէրի Պատրիարքարանը անգամ սանկ քիչ մը կը քաշուի :

Ո՛չ դիտաւորութիւն ունիմ և ո՛չ ալ ինծի կը վայլէ քննադատել որոշում մը որ այդքան բարձրէն կը բխի :

Մինակ սա գիտեմ թէ, արգիլել ուզուած անպատեհութիւնները որ երկարատե նշանատուքներէ կը ծնէին, այսուհետեւ կարճատե նշանածութիւններէ ալ պիտի կրնան ծնիլ, պայմանով որ երկու կողմէն ալ քիչ մը փութկոտութիւն դնեն գործին մէջ: Մեր հելլէն գեղանի քոյրերը երբ մտքերնին կը դնեն

փութկոտ ըլլալ—այդ պայմաններուն մէջ մանաւանդ—չըջարերական մը չէ որ պիտի կասեցնէ զիրենք:

Ինչ որ ալ ըլլայ սակայն, ընտո՞ր յայտնի է որ Սինտդականները ամուրի եկեղեցականներ են, ապա թէ ոչ ատանկ որոշում մը տալ մտքերնուն չպիտի անցնէր:

Թող չի տալ երիտասարդի մը որ ամիսնսրով իր նշանածին տունը յաճախէ. բայց ասիկայ պատուել ըսել է կեանքի գրքին էն համով, էն անոյշ մէկ էջը:

Ամուսնութեանց դառնութիւնը շատերս պիտի վհատեցնէր, եթէ նշանածութեան քաղցրութիւնը չըլլար միւս կողմէն:

Նշանածութիւնը՝ ամուսնութեան սօսկալութիւնն է, մարմինդ կամաց կամաց կը վարժուի...:

Երկնից կապոյտ կամարին տակ չեմ կարծեր որ նշանածութենէ աւելի համով, նախանձելի վիճակ մը գտնուի, գոնէ այսպէս կ'ապահովեն ինծի այն նշանուած բարեկամներս և բարեկամուհիներս օրոնք Սուրբ Յակոբը չուանով կը քաշեն, քաշած ակերնին ալ գտա:

Առանց հակասել ուղեւու չըջարերակա նին տրամադրութիւնը, ես կը կարծեմ սակայն թէ շատ աւելի բանաւոր է պահանջել երիտասարդէ մը որ իրեն կին չընտրէ աղջիկ մը՝ որքան ատեն որ լաւ մը չի ճանչնար զայն: Իրաւ է թէ ոչ տարին բաւական է և ոչ ալ տասը տարին, աղջիկ մը լաւ կերպով ճանչնալու համար:

Կին արարածը այն hieroglyphes է զոր մինչև այսօր ոչ ոք կրցած է կարդալ, այն հանելուկը զոր ոչ ոք կրցած է լուծել, այն գաղտնիքը որուն թափանցել ոչ ոքի տրուած է:

Il faut prendre les choses telles qu'elles viennent, et les femmes telles qu'elles se donnent. պիտի ըսէր ֆրանսացի մը, եթէ իրմէ առաջ ես ըսած չըլլայի ասիկայ: Ուրիշներ ալ կան, բաղդակրօնները, որ շատ բարակը չեն փնտուեր և երեսնին չի տեսած աղջիկներու հետ քսանըջորս ժամուան մէջ կը կարդուին, ամէն պատասխանատուութիւն բաղդին կռնակը բեռցնելով և յողնած ձիու մը պէս կը պառկին երկու ականջնուն վրայ:

Ասոնք ամէնէն խելացիներն են. որովհետեւ սա համոզումը ունին թէ կնկան գէրը եւ նիհարը կ'ըլլայ, խարտեաչը եւ թխաթոյրը, կարճը եւ բարձրահասակը, բայց գէշը կամ աղէկը՝ երբեք:

Բայց raffinésները կան անդին, նուրբ ճաշակ ունեցողները, դժուարահաճները որոնք կնկան մը վրայ միայն միտը չէ որ կը փնտռեն, այլ միտքը, սիրտը եւ հոգին: Եւ այս երեք խորհրդաւոր բաները ճանչնալու համար գոնէ տարի մը պէտք է որ նշանածութիւնները երկարին:

Նշանածութիւն բառը թէև անտեղի է հոս, բայց ի՞նչ կուղէք որ ընեմ, քանի որ մեր մէջ աղջկան մը հետ տեսնուելու եւ կամ զայն ճանչնալու համար անպատճառ 50 ոսկինոց մատնի մը անցնելու եւ մատին, ճիշդ ինչպէս 20 ֆրանք entree վճարելու եւ հոչակաւոր դերասանուհիի մը երեսը տեսնելու համար:

Եթէ աշխարհիս վրայ բաներ կան զորս օրեւէ կերպով ես ինծի չեմ կրցած բացատրել, գլխաւորներէն մէկն ալ սա է թէ զիրար բնաւ չի ճանչած մարդ էակներ, տարբեր սեռէ, միասին մինչև ցմահ ապրելու ուխտը ինչպէ՞ս կրնան ընել խորանի մը առջև, բաղմութեան մը ներկայութեան:

Մինչև ցմահ... կատակ չէ ասիկայ:

Եւ յետոյ, կը զարմանանք թէ ինչո՞ւ քիչ ատենէն այդ ամուսնները իրարու հետ կը գրծտին, զիրար չեն հասկնար, իրարու չեն հասնիր, շարունակ կը կռուին, փոխադարձաբար կը խաբեն մէկըմէկ. իրարմէ կը պաղին՝ ուրիշներու հետ տաքնալու համար:

Տարբեր կերպով չի կրնար ըլլալ, ընական օրէնք է այս:

Ենթադրեցէք որ վաղը զիս կարգեն աղջկան մը հետ զոր կեանքիս մէջ հաղիւ երեք անգամ տեսած եմ և որուն հետ առաջին անգամ ըլլալով դեռ անցեալ օր խօսեցայ:

Բնականաբար, հարսնիքին առաջին գիշերը քիչ մը շատ... զբաղեալ ըլլալուդ, աչքիդ բան չերեւար, ի բայ առեալ անոր աչքերուն աղուօրութիւնը, մորթին գոյնը, մաշկերուն երկայնութիւնը, ականներուն շարքը թաթիկներուն և ստաթիկներուն բարեձեւու-

թիւնը եւ այն ամէն մարմնական շնորհները
դորս ամէն կոյս քիչ թէ շատ ունի:

Ամէն բանին վաղը կայ, նոյն իսկ հար-
սանեկան գիշերներուն:

Միւս առտուն, նախաճաշի սեղանին վը-
րայ ենք:

— Ի՛նչ մը կաթ չե՞ս առներ, հոգիս:

— Չէ, ես առտունները պանիր ուտելու
սովորած եմ, սանկ մաշայիմ վրայ քիչ մը
կարմրցած:

Կինս առտունները պանիր ուտելու սովոր-
ած է եղեր, ա՛ռ քեզի անպատեհութիւն մը
որ պլտիկ, աննշան ըլլալուն համար անպա-
տեհութիւն մը ըլլալէ չի դադրիր: Ուրեմն
մինչեւ ցմա՛հ դատապարտուած պիտի ըլլամ
առտուն, մեկնած միջոցիս, դրան ետեւը, ես
զիս ղրկելու հրաժեշտի պաշիկը առնելու հա-
ճոյքէն, որովհետեւ միակ բանը որ պժգանք
կը պատճառէ ինծի, ան ալ պանիր հոտող
բերանն է, բո՛ւֆ...:

Պիտի առարկէք թէ ատոր ճարը կայ.
Տիկինը բերանը կը ցողուէ ձեր մեկնելու պա-
հուն, merci! ատանկ պաշիկ ձեզի՛ ըլլայ:

Երեւակայեցէք անգամ մը՝

— Նինի, կ'երթամ կոր:

— Կայնէ՛, բերանս լուամ sk...:

Ասանկ պայմանաւորեալ համբոյր մը, նոյն
իսկ եթէ ուրիշին կնիկէն սպասես, նորէն
համ չունի:

Դեռ այս բան մը չէ: Հապա եթէ կնիկդ
անանկ ձեռով մը կը հաղայ որ ջիղերդ ոտք
կը հանեն, այնպէս մը պատառաքաղը կը
գործածէ որ կարծես երբեք կեանքին մէջ
կերակուր չէ կերած. եթէ բարեւելու, ձեռք
սեղմելու անանկ ձեւեր ունի որ կը գար-
չեցնեն զքեզ իրմէ. եթէ խնդալու, լալու,
պարելու, կառքի մէջ նստելու, փողոցը քա-
լելու, ձեռնոցը հանելու եւ կամ դուլպան
հագնելու անանկ գոհելիկ եղանակ մը ունի
որ նողկանք կաղզէ քեզի:

Դուն եւրոպական երաժշտութենէ կ'ա-
խորժիս, մինչդեռ ինքը արեւելեանին, հոգի
կուտայ. դուն կէս գիշերէն առաջ չես կըր-
նար պառկիլ, անիկայ ժամը 9ը եղածին պէս
աչքերը կը՝ դոցէ. դուն երեկոյթներէ

կ'ախորժիս, Տիկինը հայհոյելով, տղաղալով
ոտքը դուրս կը հանէ տունէն. դուն ֆրան-
սերէն, անգլիերէն, իտալերէն, գերմաներէն
գիտես և կը խօսիս, մինչդեռ անիկայ ոչ իսկ
հայերէն. դուն ճամբորդել կը սիրես, Նինիին
դուրսը կը դառնայ մինչեւ իսկ եթէ ծովը
պատկերի մէջ տեսնայ: Այս ամէն հակասու-
թեանց մէջ կ'ուզէք որ համաձայնութիւնը
տիրէ և խաղաղութիւնը սաւառնի ընտանե-
կան յարկին տակ:

Ասանկ բանի խելքս չի հասնիր:

Եթէ մինչեւ անգամ այս ցոյց տուած ան-
պատեհութիւններուս կարեւորութիւն չի
տաք և պնդէք թէ այդ պլտիկ բաները
կարող չեն խանգարել ամուսնական անդու-
րութիւնը, ես նորէն կը կրկնեմ թէ նշանած
մը պէտք է որ իր առնելիք աղջկան նկարա-
գիրը լաւ մը ճանչնայ, դոնէ իր մեծ դիժե-
րուն մէջ: Օրիորդը բարկացո՞տ է կամ ոչ,
հաստատամի՞տ է թէ փոփոխամիտ, չա՞յլ թէ
կծծի, ծանրաբարոյ թէ թեթեւ, մարդասէ՛ր
թէ մարդատեսց. և վերջապէս առաքինու-
թիւններու ի՞նչ պաշար ունի և կամ մոլու-
թիւններու որոնցմովը համակուած է: Այս
ուսումնասիրութիւնը տասը օրուան մէջ չէ
որ կրնայ կատարել մարդս:

Գոնէ տարի մը պէտք է ըսի և խօսքս ետ
չեմ առներ.

Աղջիկ մը կնութեան առնելու համար
պէտք է զայն ճանչցած ըլլաս գարնան, ա-
մառը, աշունին և ձմեռը: Յունուարի մէջ
ճանչցած, սիրած մէկ օրիորդս, օրինակի հա-
մար, ատամ եմ յունիսին: Ձմեռը՝ մութ
դոյներով հազուստներու մէջ bijou մըն էր
պարզապէս: Ամառը՝ ձերմակ արդուղարդով,
ճանճ մը որ խենդութիւնը ունեցած է մածու-
նի մէջ իյնալու:

Դեկտեմբերի մէջ Օրիորդ այսինչը երեսը
նայուելիք բան չէր: Ուռեցած աչքեր, ու-
ռեցած չրթունքներ, փայտահարի ձեռքեր և
մորթի դոյն մը՝ կապարով և ֆրեմիսով խառ-
նուած: Երբ իրեն հանգիպեցայ մայիսին, խեն-
դեցնող աղուորութիւն մը ձեռք անցուցած
էր, խեղճ աղջիկը ցօրափ չի գար, enge-
lureներ մարմնոյն ամէն կողմը:

Աղջիկներ կան որոնք Բերայի մէջ՝ ձմեռը, ձեռք սեղմելու կը քաշուին, իսկ ամառը՝ կղզին, թեւէդ կը քաշեն. բայց օդը ստանակ չարժուաներ կուտայ արիւնին, յանցանքը իրը չէ:

Բարոյականներ կան որ շատ կ'ազդուին եղանակներու փոփոխումէն:

Ձերմաշտիկի պէս են: Դիտուած է որ կանայք բարոյականը գոց օգերուն, անձրեւոտ օրերուն, ցուրտին, միշտ զէրօյէն 20 աստիճան վեր է: Օգերը բացուելուն պէս, արեւին կենսատու ճառագայթներուն տակ, ծառերուն շուքին ներքեւ, ծովափին երկայնքը, յանկարծ փոփոխութիւն, զէրօյէն 5 աստիճան վար:

Հետեւապէս, գոնէ տարի մը աղջկան մը քղանցքին շուրջը դառնալու ես, միջին թիւը գտնելու համար, բարեխառնութիւնը:

Նոյն իսկ եթէ նշանուած մնալը այս դիւրութիւնն ալ չընծայէ երիտասարդին—և ասիկայ ամէնէն հաւանականն է, որովհետեւ աղջիկ մը որքան առեն որ նշանուած է, ամապածած օգի կը նմանի, հովանոցդ առնես թէ ոչ, կարգուելուդ պէս, փոթորիկը կը փրթի, անձրեւ, —նորէն խնդրոյ առարկայ եղող շըրջաբերականը հարուած մըն է որ կուտայ, երանութեան խաղաղ լճակին մէջ խոշոր քար մըն է որ կը նետէ. մէկ բառով, կը խանգարէ այն հնչտաւոյր, երջանակաւէտ կեանքը որ նշանածներուն արուած է վայելել:

Նշանած ըլլալը՝ արքայութեան մէջտեղի ցաւովանին քովիկը՝ յաւերժանարսի մը ձեռքէն շարունակ նեկտար խմելու կը նմանի: Վեց ամիս նշանած մնացիր, հաւատաւ որ կը մոռնաս երեսուն, քառասուն տարուան մէջ, ամուրիութեանդ ատենին բոլոր ցաւերդ, բոլոր տառապանքներդ:

Նշանածները կըսեն ասիկայ ինծի և անոնց խօսքին կը հաւատամ, առանց վերապահութեան: Երջանիկ մարդերը սուս ըսելու պէտք չունին: Եւ յետոյ, ամէն օր աչքովս կը տեսնամ կոր:

Ամէն բանէ առաջ, նշանուած երիտասարդը ներքին սա գոհացումը ունի որ օրուան այս ինչ ժամուն այն ինչ վայրկեանին, օրիորդը հազուած սքուած, կամ պաղքոնը կը

սպասէ իրեն և կամ տանը դուռը: Ես երիտասարդներ գիտեմ որոնք քսանը չորս ժամուան մէջ երեք անգամ այս երանութիւնը կը պարգեւեն իրենք իրենց:

Ասիկայ սրտի յագուրդն է. հապա ստամոքսի՞նը:

Ընդհանրապէս Պարոն նշանածը շարաթը չորս կամ հինգ անգամ վար կը դրուի, ընթրիքը միասին ընելու:

—Յոգնութիւնը չարժեր, ետքը նորէն չպիտի գաս: Քեզի համար մասնաւոր բան մը չենք պատրաստած, խաչոր. կեցիր խրեանք: Շրթունքները չե՞ ըսելու պէս շարժումներ կ'ընեն, կարծես պիտի մերժեն, բայց սիրտը ներսէն կը պոռայ—«Չի կենա՞ս աւանակ»:

Եւ երկու նշանածները կը նստին քով քովի:

Ամէնէն մաքուր սպասը, դաւթաներուն ամէնէն բարակը, դանակներուն ամէնէն հատուն իրեմ համար են: A tout seigneur tout honneur!

Եթէ սեղան բերուածը պիթքեֆ է՝ ֆիլիթօն պարոնին բաժին կ'իյնայ, եթէ rouspo է՝ էն կակուղ մասը, եթէ խորոված հաւ է՝ բոլոր ճիլերները, պուսերէն մէկը, եթէ ձուկ է՝ գլխին և պոչին մէջտեղի մասը, խաւամալին խաւալսը անոր, չեքեքերուն մեծագոյն մասը անոր, պտուղներուն էն խոշորը անոր, անուշեղէններուն է՛ն աղուր կտորները անոր, ա՛ս ալ անոր, ա՛ն ալ անոր, բոլորն ալ անոր:

Պարոնին խմած օշարակը ամէնէն սպողն է, և սուրճը ամէնէն խայմախըն:

Օրիորդը պահած friandiseներ ալ ունի, շօքօշալի հատիկներ, praline, տեսակ տեսակ բասթիլներ, շորս իր սիրականին ափին մէջ կը սպրդեցնէ երկու համբոյրի միջև:

Նշանած պարոնը առաջ մէկ բաքթիլի առէթ կը սղառէր, հիմայ հաղիւ կէս, մնացեալ մասը օրիորդը կը մատակարարէ իրեն՝ հօրը ծխատուփէն թռցուցածներովը:

Պզտիկ ընծաներն ալ կան: Այսօր ծաղկի փնջիկ մը, վաղը իր սկզբնատաւերովը թաշկինակ մը, միւս օր քեքիպար ծխափողի՞մը և ainsi de suite:

Պարոնը այս բոլոր պատիւներուն փոխարէն կը շփոթի, չի դիտեր ինչպէս բացատրէ իր երախտագիտութիւնը և ճիշդ այդ դժուար կացութեան մէջ գտնուած միջոցին է որ ձեռքերը զիրար կը փնտռեն, սրունքները իրարու կը հանդպին և շրթները զիրար կը փնտռեն: Բարեբաղդաբար հայրը անդին Բիւլանդիոնը կարգալու վրայ է, մայրը կը մըրափէ և պղտիկները քանաբէներուն վրայ կը խորթան:

Նշանածները խապար չունին սակայն, անոնք կը շարունակեն իրենց խօսակցութիւնը որու միջոցին էն պղտիկ դերը կատարողը... լեզուն է:

Ամուսնութիւնը դժոխք ալ ըլլայ, աչք կ'առնուի՝ պայմանով որ իբրեւ քաւարան, մարդս տարի մը նշանած մնայ:

Եւ շրջաբերականը մէջտեղէն վերցնել կը ջանայ այս սովորութիւնը...

Ըստ ոմանց, կարգուիլը խնդութիւն մըն է. ըստ իս՝ երկար ատեն նշանուած չի մնալը երկուք:

Մարդս ամէն ատեն չի նշանուիր:

Անդեալ օր նշանուած աղջիկ մը ունեցող պատուական հօր մը հետ կը խօսակցէինք այս խնդրոյն վրայ:

— Բարեկամ, ուր է թէ այդ պատուէրը բռնէին? Ուր օր, ամիս մը բաւական է: Երեւակայէ որ աղջիկս չի նշանած, ամիսը 20 ֆրանք կազի ստակ կուտայի, նշանուելէն ի վեր 80 ֆրանքը չի բաւեր կոր, ի՞նչ կ'ըսես:

Եթէ կարելի ըլլար ամէն բան ըսել, սա պատասխանը պիտի աայի իրեն.

— Իրաւունք ունիս, քաշուելիք բան չէ 80 ֆրանքի կազ: Եկուր բան մը ընենք. աղջիկդ զատէ տնորմէ և ինծի տուր, parole d'honneur ամիսը 5 ֆրանքի կազ սպառել չիմ տար քեզի: Դուք կանուխէն կը պառկիք, մենք ալ մութին մէջ կը նստինք, կ'ըլլայ:

ԳՐԻԶԱՆԹԻՄ

ԳՐԱԿԱՆ ՆՈՒՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

Տրապիզոնի ազգային գրեթէ Տիար Վահրամ Միմասեանց տարեկան մեկ օրինակ «Մասիս» նուիրեց նոյն գաւառի Ապիթոն գիւղի վարժարանին:

ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՇՆՈՐՀ



Դոնութեամբ կը ծանուցանենք թէ Վեհ. Սուլթանը բարեհաճած է Դ. կարգի Մէճիտիէ պատուանշան շնորհել Արեւելի լրագրոյ արտօնատէր Զարեհ էֆ. Եոսուֆեանի և Սանիյէի աստիճան՝ Մանգուսիէ Էֆենար լրագրոյ արտօնատէր Յովհաննէս Ֆէրիտ էֆ. Դայսէրեանի: Կը շնորհաւորենք մեր յարգելի պաշտօնակիցները՝ Կայսերական այս շնորհին արժանացած ըլլալնուն համար և ջերմապէս կը ձայնակցինք այս առթիւ իրենց ուղղուած խնդակցութիւններուն:

Նոյնպէս գոնութեամբ կը ծանուցանենք թէ Իւլայի Բ. աստիճան շնորհուած է Տնտես. Խորհուրդի անդամ Վահան էֆ. Սուրէնեանի և Ուսումն. Խորհուրդի անդամ Պօղոս էֆ. Բէրէստէճեանի:

ՆՈՒՐԱՏՈՒՆ



Նշանուիրդ գիտե՛ս քե ինչ
Նուէր պիտի տամ քեզ, մանկիկի:
— Կապուսիկ մը երկնագոյն. ջիճջ.
Չոր խոտերու մէջ ոսկեղենիկ՝
Որուն նման մաքուր կապոյս
Չե՛ս տեսնուած տեղ մը երբեք.
Բաց ի փոկից կոյս աչքերուդ
Հորիզոնէն մաքուր, բեկբեկ:

Ամուսնութեանդ գիտե՛ս քե ինչ
Նուէր պիտի տամ, աղջիկ. քեզ:
— Շանոքամ մը կարմիր ու ջիճջ
Վերջապոյսին ծիրանոյն պէս՝
Որուն նման տեսնոյս կարմիր
Մարգիկ ոչ մեկ տեղ տեսած եմ,
Բաց ի շրթանցդ փու ձիւնածիր
Ծիրանեգոյն վառ բաժակէն:

Իսկ քաղովիդ գիտե՛ս քե ինչ
Պիտի ձօնեմ աղջիկ քեզի:
— Աւա՛ղ, բոցնամ շուշան մը ջիճջ,
Տառակներու մէջ վայրենի՝
Որուն տգոյն հուսկ դժուր կից
Պէս, ծալիկ մը չե՛ ունեցած.
Բաց ի խամրած ծաղկէն փոկից
Դեմքիդ սիրուն անշուշտացած:

Թարգմ. ԳԱՅԷԱԿ

ՔԱՅԻՒՆ ՄԷՆԵՍ

ՈՒՐՈՒԱԳԻԾՆԵՐ

(ՎԱՅՐԿԵՆԱԿԱՆ)

ՁԻՖԹԵ-ՍԱՐԱՓ

Իրեն համար կարելի է ըսել թէ աստիճանական, մէթոտիկ կերպով ճամբայ առաւ մեր գրականութեան մէջ, ուր նորերուն ամէնէն փայլուն գէմքերէն մէկը կը ներկայացնէ այսօր: Բոլորովին ներհակը անոնց, որոնք առաջին գրութեամբով յայտնութիւն մը կ'ըլլան ու գուշակել կուտան ապագայ գրագէտը, Ձիֆթէ-Սարաֆ տակաւ տակաւ ճանչցուեցաւ ու գնահատուեցաւ: Ինչ որ, սակայն, առջի վայրկեանէն ուշադրութիւն գրաւեց իր յօդուածներուն, իր նորավէպերուն մէջ, գաղափարներէն, նկարագրութիւններէն աւելի՝ իր ինքնատիպ ոճը, նորաստեղծ բառերը եղան, — «ապրելակերպ»ը, «խորհելակերպ»ը, «գրելակերպ»ը: Բննադատութիւններուն, հեղեւթութիւններուն առջեւ, որոնք արձակուեցան իր գէմ՝ այս լեզուական նորութիւններուն առթիւ, տեղի չի տուաւ երիտասարդ գրողը, ոմանց պատասխանելով և ուրիշներուն ալ ժամանակ թողլով որ իրենց գայթակղութեան առաջին դայրոյթը մեղմանայ: — Գրիզմանթէմ՝ իրենինէն տարբեր և շատ աւելի բուռն գայթակղութիւններու կուրծք տուած էր:

Օր մըն ալ երեւցաւ Պուրթէի վէպը, Փիլիսոփայիճ առակները, որուն թարգմանիչը կը փորձէր այս գեղեցիկ հատորին միջոցաւ մնայուն ձև մը տալ, եթէ ո'չ նուիրագործում մը, իր զուգորդուած բառերու շարքին, որոնք անկէ ի վեր քաղաքացիի իրաւունք ստանալու կը ձգտին արդի աշխարհաբարին մէջ, թէև իրենցմէ անբաժան կը մնան դեռ շուրջ մը չակերանները («—») նոյն իսկ անոնց գրչին տակ որոնք հաւնելով կը գործածեն այդ բառերը: Տեսակ մը խորան կամ դատաւիճ, զոր բառերիքի ապագայ հեղինակները միայն ձեռնհաս են վերցնելու:

Ձիֆթէ-Սարաֆ որ կանուխէն «ապագայ փաստաբան»ի տիտղոսը տուաւ ինքզինքին,

իրեւ իրաւաբանական ինքնավստահ ուսանող մը՝ այժմէն, մօտ օրէն կը վերադառնայ փակուել Մոնթէլիէի Համալսարանը, լուրջ ուսումնասիրութիւններու համար, որոնք չենք դիտար թէ ժամանակ պիտի թողուն իրեն շարունակելու իր գրական աշխատակցութիւնը մեր թերթերուն: Բայց, արդէն իսկ, իր առաջին Եւրոպական ուղեւորութիւնը հայթայթեց իրեն լայն տպաւորութիւններ, հետաքրքրաշարժ նօթեր, իրական՝ ապրուած կեանքի պատկերներ, ամէնքն ալ գրական աղուոր ձեւի մը տակ:

Ֆիզիքայէս, Պուրթէի թարգմանիչը գեղեցիկ երիտասարդ կ'ըսուի ճամբորդութիւնը կրճատեց իր մօրուքը ու... անունը միայն, մօրուսաւոր Օննիկ Ձիֆթէ-Սարաֆը վերադառնալով մեզի անմօրուս Ձիֆթէ-Սարաֆ. բայց ասով, բան մը չի կորսնցուցին ո'չ իր գէմքին գրաւիչութիւնը ո'չ իր ստորագրութեան հրապոյրը: Արդէն, քիչերու արուած է այսքան Դրական մականուն մը Դրականացնելու յամառութիւնը, որուն մէջ յաջողեցաւ ինքը:

Բարձրահասակ, թիկնեղ, կայտառ գէմքով ու կարմիր այտերով, Ձիֆթէ-Սարաֆ կ'աշակերտի այն մարմնով ալ առողջ գրական Դպրոցին որուն ջատագով կը հանդիսանար Հարսուէն՝ պատասխանելով Մարսէլ Բրէվոյի: Խոսուն, զուարթախոհ այս երիտասարդը չիկնոտ բան մը ունի, սակայն, իր անձին վրայ որ չի համապատասխաներ իր վիճաւոր բնաւորութեանը ու խիզախ գրչին: Այս հակադրութիւնը անսպասու չէ իրեն. ընդհակառակը, աւելի՝ համակրելի կը դարձնէ ու աւելի՝ կը յատկանիչէ զինքը:


ԳԱՄԷՐ

ԱՌԿԱՆ ԶԱՇԻՆՆԵՐ

Անգամ մըն ալ հարկ կը համարեմք կրկնել մեր հրապարակային հրաւերը մեր այն գաւառային գործակալներուն ու հեռաբնակ բաժանորդներուն որոնք չի փութացին տակաւին կարգադրել իրենց բաժանորդագրական հաշիւը թերթիս հետ: Նքի մինչեւ հոկտեմբերի սկիզբը չի զրկեմ ապառիկ բաժանորդագրիցները, «Մասիս»ի նամակագրութիւն միջոցաւ անուանական կերպով իրենց ազգաբարեւու հարկին մէջ պիտի գտնուին:

“ՃԵՐՄԱԿՆԵՐՈՒ ԱՌՈՒՑՈՒՐ,”

(ԱՄԵՐԻԿԱ ՂԴԿՈՒԱԾ ՀԱՐԱՆՅՈՒՆԵՐՈՒ ԱՌԹԻՒ)



«Ճերմակներու առուտուր» ին մէկ բոլորովին նոր տեսակը ի դործ կը դրուի այս պահուս հոս, նոյն իսկ մեր մօտը: Գործով Ամերիկա հաստատուած կարգ մը Հայեր կ'ենրեւայ թէ չկրնալով տեղին վրայ իրենց կին մը գտնել, հոս իրենց բարեկամներուն կամ ազգականներուն կը գրեն որպէս զի աղջիկներ ճարուելով Ամերիկա ղրկուին, իրենցմէ մէկուն կամ միւսին հետ ամուսնանալու համար:

Ասիկա՝ այսօր արհեստ մը դառնալու վերայ է, և բաւական աղուոր չա՛ մը կ'ապահովէ եթէ ո'չ այդ հեռաքնակ Հայերու բարեկամներուն կամ ազգականներուն, գոնէ անոնց որոնք միջնորդի դերը կը կատարեն հոս, և որոնց ջանքերուն շնորհիւ միայն կարելի կ'ըլլայ պէտք եղած աղջիկները գտնել: Վանցի կին մը մանաւանդ որ մինչև այս վերջերս սոցատուհիի միջնորդութեամբ կ'ապրէր, ձգեր է իր երբեմնի արհեստը և ինքզինքը տուեր է այս նորօրինակ ամուսնական միջնորդութեան: Ամերիկա ղրկուելիք աղջիկներու գլխաւոր հայթայթիչը ինքն է այս պահուս, և իբր չա՛՝ պզտիկ բան մը չէ որ կը բերէ իրեն այդ հանգամանքը:

Թէ ամուսնական այսօրինակ միութիւններէ ի՛նչ տեսակ հետեւութիւններ կրնան ծագիլ, ատիկա հոս բացատրելը բացարձակապէս աւելորդ պիտի ըլլար: Մղոններով հեռուէն երկու տող գրաւոր տեղեկութիւն ստանալ իրարու մասին, — միջնորդներու կողմէ յերկրուած կատարելապէս՝ սուտ տեղեկութիւններ, — և մէկ օրէն միւսը դէմ դէմի դալ իբր ամուսին, առանց իրար ճանչնալու, առանց իրարու թրուութիւններուն և յատկութիւններուն նկատմամբ նոյն իսկ ամենատարրական գաղափար մը ունենալու, առանց իրարու անցեալը, ընտանեկան կացութիւնը ճանչնալու, ահա՛ ինչ որ երբեք չպիտի կըր-

նար մինչև անգամ քիչ շատ յարատեւութեան յոյս տուող ամուսնական միութիւն մը դու հասնել:

Այդ մարդիկը՝ որոնք իրենց բարեկամներուն վստահելով կեանքի խաչալ ընկերուհիներ գտնել կը կարծեն այդքան հեռուէն, զիտե՛ն արդեօք թէ դժբախտութեան ապագայ մը միայն պատրաստել կուտան կամ կը պատրաստեն իրենց համար, ո'չ աւելի ոչ պակաս: Դիտե՛ն արդեօք թէ ի՛նչ պայմաններու մէջ տեղի կ'ունենայ հոս այդ աղջիկներու հայթայթումը, թէ որչա՛փ կը խաբուին իրենք և իրենց բարեկամները կարգ մը միջնորդ կիներէ, անխիղճ, պատուազուրկ, և պզտիկ չա՛հու մը համար մարդկային նոյն իսկ ամէնէն նուիրական, ամէնէն յարգելի դէպքումները ռանակոխ ընելու մշտապատրաստ կիներ, որոնք յաճախ չեն վարանիր լոփ բնաւորութիւն ունեցող աղջիկներ իբր հրեշտակներ ներկայացնելու, ոչ ալ ամէնէն վատահամբաւ աղջիկներն իսկ իբր ամէնէն պատուաւորներն ու անաղարտները ցուցնելու:

Կը հասկնանք որ այդչափ հեռուներէն իրենց համար դժուար ըլլայ բոլոր այդ պարագաներուն նկատմամբ ստոյղ տեղեկութիւն մը ձեռք բերելը, բայց վերջապէս գոնէ իրենց հոս գտնուող բարեկամներուն կամ ազգականներուն համար այդ դժուարութիւնը գոյութիւն չի կրնար ունենալ: Իրենք շատ քաւ կրնան հասկնալ թէ ո՛վ և ի՛նչ տեսակ անցեալ մը ունեցած է այն միջնորդը որ իրենց աղջիկ մը կը ներկայացնէ: Իրենք կրնան հասկընալ թէ ի՛նչ տեսակ ահուսին մը կրնայ դառնալ ներկայացուած աղջիկը, թէ ի՛նչ կը խօսին անոր վրայ, թէ՛ մանաւանդ ի՛նչ պատճառներ զինքը մինչև այն ատեն տունը մնալու ստիպած են, և թէ ինչո՞ւ իր ծնողքը այդչափ դիւրութեամբ կ'ուզեն վերջնականապէս բաժնուիլ իրմէն, քանի որ անգամ մը Ամերիկա հարս երթալէն ետքը՝ ա՛լ չատ հաւանականութիւն չի մնար զայն կրկին տեսնելու: Այս ամէնը կրնան դիւրաւ հասկնալ, — եթէ երբեք աւելորդ ձանձրոյթ մը, տաղաւի մը չեն նկատեր իրենց եղած յանձնարարութիւնը, — և այդպէսով, իրենց հեռա-

ընտել բարեկամներուն կամ ազգականներուն ամուսնական զեքաղդ միութիւն մը պատարաստած, անոնց կեանքը թունաւորած, անոնց հիւրընկալ յարկին տակ իժեր տեղաւորած չեն ըլլար:

* *

Մեր ըսածը աւելի բացորոշ կերպով մը հասկնելու համար, նկարագրենք թէ ինչպէ՛ս, և ի՛նչ պայմաններու մէջ տեղի կ'ունենան այդ աղջկան հայթայթումները, այսինքն՝ թէ միջնորդները ինչպէ՛ս աղջիկ կը ճարեն մինչեւ աշխարհի ծայրը զրկելու համար:

Միջնորդ մը, — ընդհանրապէս կին, ճիշդ այն վաճառիկն պէս որուն ակնարկեցինք քիչ մը վերը, — շատ վարպետ է: Գիտէ թէ ո՛ւր և ո՛ր ընտանիքներուն մէջ տունը մնացած աղջիկներ կան, այն տեսակ աղջիկներ որոնք հոս ամուսնանալու ամէն հաւանականութիւն կորսնցուցած են, և որոնց ծնողքն ալ, զանոնք աւելորդ բեռ մը նկատելուն, դժուարութիւն չպիտի յարուցանեն կատարուելիք առեւտուրին:

Այդ կարգի աղջիկներուն տունը մնացած ըլլալուն պատճառները գաղտնիքներ չեն: Շատ բաց մեծցուած, հազար ու մէկ մարդու հետ ինկած ելած, յաճախ գայթակղութեան աղբիւրներ դարձած աղջիկներ են, զորս հոս ոչ մէկ ընտանիք, — նոյն իսկ ամէնէն նուազ խստապահանջը, — չպիտի ուզէր իր տան մէջ իբր հարս ընդունիլ: Տունը մընալով, այդ աղջիկները, ուրիշ բան չպիտի կրնան ընել, եթէ ոչ շարունակել այն աղտոտ կեանքը որուն մէջ անգամ մը մտած են: Իրենք միշտ յարաբերութիւններ պիտի մշակեն հանդիպած մարդուն հետ, — կտոր մը բան մէկէն, կտոր մը բան միւսէն փրցնելու համար, — պիտի խօսուին առանց կարեւորութիւն տալու, կրկին գայթակղութիւններ պիտի յարուցանեն:

Այս կարգի աղջիկներ պիտի կրնա՞ն երբեք շտկուիլ, ամուսնական կապով մը այս կամ այն անձին միանալէ վերջ: Ասիկա ո՛չ թէ միայն տարակուսական, այլ բացարձակապէս անկարելի է: Ապականութեան ճամբուն մէջ ինկած մէկը երբեք չի կրնար ետ դառնալ:

որչափ որ ալ զինքը այդ ճամբէն շեղեցնել ուզեն, ուշ կամ կանուխ կրկին հոն պիտի իյնայ: Կեանքի մէջ այնչափ բազմաթիւ օրինակներ կան այս մասին, որ անպատճառ թուլմաս առաքեալ մը ըլլալ պէտք չէ համոզուելու համար:

Միեւնոյն պայմաններուն մէջ կը գտնուին նաև այդ տեսակ աղջիկներու ընտանիքները: Ընդհանրապէս կասկածելի բարոյականի մը տէր, պատուոյ ամէն զգացում ոտնակոխ ըրած ծնողքներն են որ կրնան իրենց աղջիկներուն թոյլատրել այդ աստիճանին հասած անպատիւ կեանք մը, և գոց աչքով դիտել, նոյն իսկ արդարացնել անոնց յարուցած գայթակղութիւններն ու ամօթը: Շատ հեղ բուռ մը զաւակներով այրի մնացած կիներ կ'ըլլան այդ ընտանիքներուն պետ, և իրենց հաստատած անուղղակի սեռային յարաբերութիւնները քիչ մը աւելի ազատօրէն մշակելու համար դժուարութիւն չեն յարուցաներ երբ աղջիկինն տունէն դուրս հանելու ո՛ր և է առիթ մը կը ներկայանայ:

Միջնորդ կիները ահա ճիշդ այդ առիթն է որ կու տան անոնց, և աւելորդ է քսել թէ գրկաբաց կ'ընդունուին: Աղջիկներն ալ, բոլորովին անյոյս ապագայի մը հանդէպ, իրենց կողմէ առարկութիւն չեն յարուցաներ, և ալ անկէ անդին, միջնորդ մը կրնայ զանոնք ո՛չ թէ միայն Ամերիկա, այլ նոյն իսկ մինչև Հիւսիսային Բեւեռ զրկել առանց տրտունջի բառ մը լսելու:

Համաձայնութիւնը այսպէս գոյացուելէ վերջ, մնացածը տղու խաղալիք կը դառնայ: Ա՛լ կը սկսին բարի վկայութիւն տալու տրամադիր մարդիկ փնտռել, և այդ անպատիւ, ամօթով բեռնաւորուած աղջիկներուն շուրջը հիւսել մաքուր երեւոյդ համբաւ մը ուրկէ քիչ շատ միամիտ մարդիկ դիւրաւ կը խաբուին: Եթէ աղջիկը կտոր մը կար կարել ալ գիտէ, և կամ վրան դուրսը կրնայ չտիկ առանց մօտիսթի մը պէտք ունենալու, գործը ա՛լ աւելի կը դիւրանայ: Հարանցան ձեռուած, շինուած է: Կը մնայ գտնել փեսացուն, և ան ալ դժուար գործ մը չի դառնար միեւեռոյն օձի լեղուով և դորձաւորութիւններով:

Ահա այս աղջիկներն են՝ որ հոս կը ժող-
վեն ամերիկացիներուն համար։ Ահա այս
պայմաններուն մէջ է որ տեղի կ'ունենայ այդ
խեղճերուն ամուսնութիւնը։ Արտաքին խա-
բուսիկ երեւոյթի մը տակ՝ անոնց ապագայ
կեանքը այսպէսով է որ կը սկսին թունաւո-
րել, ոմանք գիտակցօրէն, ոմանք անգի-
տակցաբար։

* *

Ու մտածե՛լ թէ այս աղտոտ գործը առու-
տուրի մը հանգամանքը կը ստանայ տակաւ։
Ու մտածե՛լ թէ խաբուողները մէկ հատ մը
չեն, երկու հատ չեն, այլ շատ աւելի բազ-
մաթիւ։ Արգիլել այս կարգի ամուսնական
միութիւններ, ատիկա մամուլին գործը չէ։
Մամուլը մատնանիչ ընելու պարտաւորու-
թիւնը ունի միայն։ Անկէ անդին, իր մատ-
նանիչ ըրածը նկատի առնելու հոգը կ'իյնայ
բոլոր անոնց որոնք իրենց պաշտօնին և կամ
իրենց դիրքին բերմունքով կրնան պատաս-
խանատու մնալ այդ մասին։

Օրինակի համար Ամերիկայի Հայոց առաջ-
նորդ Սարաճեան Յովսէփ եպիսկոպոսը, և
անոր հետ ալ Ամերիկա գտնուող բոլոր հո-
գեւոր հովիւները կրնան իրենց հօտը զգու-
շացնել այսօրինակ ամուսնական միութեանց
վտանգներուն դէմ, և ապահովաբար լաւա-
դոյն բարիքը ըրած կ'ըլլան անոր։

Թող գործով, առեւտրական ձեռնարկնե-
րով Ամերիկա հաստատուած Հայերն ալ մէկ
դի թողուն կին դանելու այդ ծրագիրը որ
պարզ դժբաղդութիւն միայն կրնայ բերել
իրենց, ուրիշ ոչինչ։ Աւելի լաւ է անկին
մնալ, քան թէ ամուսնանալ ա՛յդ աստիճան
անյարմար ու մանաւանդ անվայել պայման-
ներու մէջ։

Ամէն բանէ առաջ թող չմոռնան սա կէտը
թէ անբասիր, անցեալով մաքուր, և հոս ա-
մուսնանալու հոգ չէ թէ շատ պզտիկ հաւա-
նականութիւն մը տեսնող ո՛չ մէկ աղջիկ
երբեք յանձն պիտի առնէր ամուսին մը, մա-
նաւանդ իրեն բոլորովին անծանօթ ամուսին
մը գտնելու համար Ամերիկա երթալ։

Միեւնոյն կերպով, իսկապէս իր աղջիկը
վրայէն նետելու, տունը մնալու դատապար-

տուած աւելորդ բեռէ մը աղատելու մտադ-
րութիւնը չունեցող ո՛չ մէկ ծնողք երբեք
պիտի ուզէր իր հաւանութիւնը յայտնել այդ
հանգամանքը ունեցող ամուսնական համա-
ձայնութեանց։

Այս երկու կէտերը շատ ուշադրաւ են
ինքնին, և կրնան համոզել ամէնէն թերա-
հաւատներն իսկ։ Եթէ երբեք այդ հեռաըն-
նակ Հայերը, — որոնց մէջ կրնան շա՛տ պար-
կեշտ և պատուաւոր անձեր գտնուիլ, — մի՛
միայն այս երկու կէտերուն ուշադրութիւն ըն-
ծայեն, իսկոյն պիտի հասկնան թէ ի՛նչ տե-
սակ անդունդ մը կը բացուի իրենց առջև։

ՄԷԻՍԷՏԷՍ

ԾԱՄԱՅՈՅՅԸ



Կես գիշեր է, միսմիմակ... Ինքն ու ես,
Սեմեակս ամբողջ մութի մէջ կը մեքսի,
Բաց ի գրեմ լեցուն պզտիկ սեղանէս՝
Ուր յուսամիտփն առաս լոյս մը կը բափէ։

Ու կը խոկամ, ընկողմանած յուրօրէն,
Չանձնօրիքի, սպասումի ծիծիփուն
Արիքներով, որոնք հոգիս կ'օրօրեն
Յամբ ու մառող արհամարհամբ մ'օրն իբուն։

Գիւղի հանդարտ յուրքիւնը բացարձակ
Պաշէն կախուած ժամացոյցը կը խզէ
Իր «քիֆ քաֆ»ովն համաշափ ու միօրնսկ,
Ու կարծես քէ ի՞նչի բաներ մը կ'ըսէ։

Ա՛յո, ինձի իմաց կուտայ մեղմօրէն
Թէ մարդ բնաւ դադար չունի կեանքին մէջ,
Ամէն օր քուղթ մը կը դառնայ հասորէն՝
Ուր օր մը կը ներկայացնէ ամէն էջ։

Ալդ «քիֆ քաֆ»էն սարսուռ կը զգամ. վասնզի
Կեանքիս քայլերն են որ կարծես կը հնչեն
Ու անոնց սուր արձագանգն է որ ինձի
Ես կը դառնայ սա ժամացոյցին մէջէն։

Ու զայն կոտրել, փօրել կ'ուզեմ անխնայ
Արգիլելու համար, հոգի՛ս, որ այսպէս
Նըզանկութեան վայրկեաններէս չգողնայ,
Թո՛ղ կանգ առնէ մինչեւ որ քովի ըլլամ ես։
Վ.

ԼԻԼԻԵՆ ՄՕՐՐԻՍ

2.

(LILLIAN MORRIS)

Գրեց ՀԷՆՐԻԺ ՍԷՆԳԻԶՎԻԶ .

Թարգմ. ԶԷՖԹԷ-ՍԱՐԱՅ .

Ատով հանդերձ, կիներուն նկատմամբ խնամաստարութիւններս կը կրկնապակտէի և շատ անգամներ անոնց վակօնէն ներս կը նայէի, Մօրքուր Էթֆինսի ու Մօրքուր Կրօզվընըրի աւողջական վիճակը հրացնելով փնտռելով, որպէս զի ատով կարենամ արգարացնել բազմաթիւ այն հոգածութիւնները՝ որոնցմով կը շուրջպատէի Լիլիէնը: Բայց ան, շնորհալի աղջնակը, շատ աղէկ կը հասկնար թէ ձախաւեր կանխադգուշութիւններու այդ հիւսքին մէջէն որո՞ւ կ'ուզուէին մտածումներս, և մեր մէջ քիչ քիչ, սերտ ու թաքուն համակրութիւն մը կը դոյնանար:

Շատ չանցած, նայուածքները, կարճ ու կրճատ պարբերութիւնները, հոգատարութիւնները և քաղցրիկ մտազբաղումները, քիչ գալ սկսան: Այդ թարմածիլ էակը անդիմադրելի ուժով մը զիս իրեն կը քաշէր: Ամբողջ օրը իր վրայ կը մտածէի և երբ իրիկուան, պահակներուն վրայ վերջին աչք մը նետելու համար ըրած այցէտ չարաչար յոգնած, հոս ու հոն հրամաններ արձակելէն կուկորդս պատուած, կուգայի կը մանայի վերջապէս սայլիս մէջ և գիշերն ի բուն փաթթուած կը մնայի գոմէշի մորթի մը մէջ. ինծի անանկ կուգար որ շուրջս բողբոջած մը՝ զուկները ու մոծակները կը մըմնջէին անընդհատ:

— Լիլիէն, Լիլիէն, Լիլիէն:

Երազներուս մէջ իր անբիծ դիմաստուերը կը ցցուէր առջիս և երբ կ'արթննայի՝ առաջին մտածումս, նետի մը պէս, դէպ ի անոր կը թռէր: Եւ սակայն տարօրինակ բան, տակաւին չէի խելամտած որ, այն զօրաւոր ձգողութիւնը որուն կը հպատակէի ես, այն ոսկիէ շքեղ փառապսակը որով ծածկուած կերեւային ինծի զինքը շրջապատող բոլոր իրերը, դէպ ի անոր սիրտը խուժող այս խոր-

հուրդներս, պարզապէս արուհիի մը համար զգացուած բարեկամութիւն կամ դթութիւն չէին այլ ևս, այլ նոյն ինքն սէրը, որուն ոչ մէկ անհատ կրնայ դիմադրել այս սշխարհիս վրայ, երբ իր ժամը հնչած է:

Այդ բանը թերեւս աւելի կանուխէն զգացած պիտի ըլլայի, եթէ Լիլիէնի բնական քաղցրաբարոյութիւնը ուրիշ շատ սիրտեր ալ առինքնած չըլլար. անկեղծօրէն կը խորհէի որ ես ալ իր հմայքին տակն էի այնչափ որչափ ուրիշները: Ամէն ոք կը սիրէր զայն իր իսկ զաւկին պէս, բան մը որուն արտայայտութիւնները ամէն օր տեղի կունենային աչքերուս առջին: Իր ընկերուհիները, դաստիարակութեան երես չի տեսած կնիկներ, շատ դիւրին էր թելադրել շատդուց վիճաբանութիւններու, մինչդեռ մէկէ աւելի անգամներ տեսած էի Մօրքուր Էթֆինսը որ առտուն անոր մազերը կը սանտրէր և մայրական գորովանքով մը կը պաղնէր անոր երեսները. տեսած էի նաև Մօրքուր Կրօզվընըրը որ իր լայն աիկրուն մէջը առած կը ստաքնէր Լիլիէնի գիշերուան զովութենէն մսած ճերմակ ու պտղիկ թաթիկները:

Երիկ մարդիկ նմանապէս խնամքով ու հոգատարութիւնով կը շրջապատէին զայն: Կարաւանին մէջ Գանգապի երիտասարդ արկածախնդիր մը կար, Հէնրի Սէմիսըն անունով, որ յանդուգն որսորդ ու պարկեշտ սիրտի տէր մէկն էր, բայց այն աստիճան ինքնահաւան, կոշտ ու ժպիրճ էր որ ճամբորդութեան առաջին ամիսին մէջ, երկու անգամ քսիպուեցայ ձեռքի ուժով կարգի բերել զայն, համոզելու համար զինքը որ արչաւախուժքին գլուխը գտնուող մարդը բարոյական հեղինակութեան չափ ալ՝ ֆիզիքական հեղինակութեան տէր էր: Պէտք էր զինքը տեսնալ Լիլիէնի հետը խօսած ատենը: Ինք, որ նոյն իսկ Միացեալ-Նահանգներու նախագահին

դէմը ելած ատեն ամենապզտիկ խռովք մը պիտի չգլար, դեռատի աղջկան ներկայութեանը իր բովանդակ ինքնավստահութիւնը և հպարտութիւնը կը կորսնցնէր։ Ամէն վայրկեան կը կրկնէր .

— Ներդուլթիւն կը խնդրեմ, Միս Մօրիս . խնդրեմ ներեցէք, Միս Մօրիս :

Սովորաբար չղթայապիրկ գամբուի մը կերպարանքը ունէր, բայց կը դգայիր որ այդ գամբուը մշտապատրաստ էր, քնքուշիկ ձևովն ամենապզտիկ մէկ նշանին հնազանդելու։ Պնայքի դադարներուն ատեն կ'աշխատէր Լիլիէնի մօտիկութեանը ինչպիսի և անոր ամէն տեսակ մանր մունր ծառայութիւններ կը մատուցանէր։ Կրակը կը վառէր . անոր համար կ'ընարէր անանկ տեղ մը ուր անհանգիստ չըլլայ մուխէն, անոր նստելու տեղ կը պատրաստէր մամուռով զոր իր թումբին գորգովը կը ծածկէր . և այն օրը զարնուած երէին էն փափկահամ կտորները կը հրամցնէր անոր։ Ամէն բան կը կարգադրէր երկչոտ հոգածութիւնով մը զոր իրմէն բնաւ չէի սպասեր, բայց որ զարմանքիս զուգընթացօրէն, ներսս՝ նախանձի շատ մօտիկ դժկամակութիւն մը կը յարուցանէր։

Թէև իր վարուելու կերպերը կը նեղացնէին հոգիս, բայց ես ատոր համար բացէ ի բաց չէի կրնար բողոքել։ Երբոր իր ծառայութեան շրջանը կատարած ըլլար, Հէնրի ալ բացարձակապէս իրաւունք ունէր իր ժամանակը իր ուղածին պէս գործածելու։ Եւ տարակոյս չիկայ որ ատանկով, ան ինչ շատ աւելի յաճախակի կերպով կրնար Լիլիէնի քովը գտնուիլ, քանի որ իմ պաշտօնս անվերջանալի բան մըն էր գրեթէ։ Ծամբան, երբեմն, վակօնները չափէն աւելի կը հեռանային իրարմէ . բայց հանգիստի ատեն և մանաւանդ բացօթեայ տեղերը, մարգագետիններու մէջ եղած ընթացիկ սովորութեան մը համեմատ, քով քովի, գրեթէ անիւ անիւի կպչած կը կենան անոնք։ Մարդ մը մեծ դժուարութիւնով պիտի կրնար անցնիլ անոնց մէջ տեղուանքէն։ Ալ դիւրին է մակաբերել թէ ինչչա՛րի դժուարութիւններ ու յոգնութիւն կը պատճառէր ինծի՝ օրը երկու անգամ պաշտպանու-

թեան գիծի այս կազմակերպութիւնը։ Զորինքը բնութիւնով յոռեարոյ ևն ու անհամբոյր։ Կա՛մ կը մերժէին առաջանալ, կամ չէին ուղեր դուրս ելլալ սովորական չափիչն կամ իրար կը խածատէին վրձնելով ու քացելով։ Վակօնները, բուն շարժումներով քաղուտուած, շատ անգամներ կը շրջէին յեղակարծ, և փայտէ ու կտաւէ այդ կատարեալ տունները վերցնելը ու շտկելը երկար ժամանակի գործ էր։ Անասուններուն զոնչը, կառավարներուն յիշոցաւոր անիծանքները, կազմածներու բոժոժաճայնը, շուններուն հաչիւնը դժոխային ժխոր մը կը յարուցանէին։ Երբոր ամէն բան կարգի դնէի, պարտաւոր էի հսկել անասուններուն կազմածներէ մերկացումին և իրենց գործին գլուխը կանչել ու առաջ մղել այն մարդիկը՝ որոնց պաշտօնն էր խոտի ու ջուրի տանիլ զանոնք։ Այդ միջոցին է որ գնացքի ատեն, որսի համար կարաւանէն հեռացողները, ամէն կողմէ իրենց երէին հետ կը վերադառնային, կրակները կը չինուէին և ես դժուարով ատեն կը գտնայի ուտելու կամ շունչ առնելու։

Մեր ամէն մէկ մեկնումին ատեն գրեթէ ատոր կրկինին չափ աշխատութիւն ունէի։ Զորինքներուն կառաւածումը նոր խառնաշփոթութիւններու տեղի կուտար . ամէն կառավարներն ալ առաջ անցնիլ կուղէին իրարմէ, դժուար տեղուանքը դիւրին անցնելու համար։ Կոիւններ ու վիճաբանութիւններ առաջ կուգային որոնք մեծապէս յապաղումներու պատճառ կ'ըլլային։ Պէտք էր հսկել, պարտաւորել կառքերը որ իրենց կարգէն դուրս չելլան և ճամբայ ելլալէն անմիջապէս վերջը ձիավարել դէպ ի առաջ, երթալ անցնիլ առաջնորդներուն ճիշդ ետին, հսկելու համար շրջականերուն վրայ, և ետքէն ընտրելու համար բանակելու յարմար տեղուանքը, որոնք դիւրաւ պաշտպանելի, ջուրով օժտուած և ընդհանուր կերպով հանգստաւէտ ըլլային։ Հրամանատարի պարտաւորութիւններս կ'անիծէի մէկէ աւելի անգամներ, հակառակ անոր որ, ատոնք միւս կողմէ հոգարտութիւնով կը լեցնէին ներսս, այն ատեն մանաւանդ երբ կըզգայի որ բոլոր այս մարդերուն հա-

մար և Լիլիէնի առջև, ես առաջինն էի կրու-
ուող անապատին հետ և երբ կը խորհէի որ,
լայնածաւայ մարգագետիններու մէջ թա-
փառող բոլոր այս էակներուն ճակատադիրը
իմ ձեռքերուս մէջն էի բռնած:

Բ

Միսիսիբին անցնելէս քիչ մը ետքը, կա-
յանք տուինք Սէտար Բիվըրի մօտ որուն
բամպակենիներով ծածկուած սեպ եղերք-
ները, դռնէ առատ վառելանիւթ կը խոտա-
նային մեղի, գիշերուան համար: Աշխատու-
թեան վրայ եղող մարդերուն, — որոնք առ-
պարի հարուածներով բաղ-մաթիւ թփիկներ
կը տապալէին — վրայ ըրած հսկողութենէս վե-
րադարձած ատենս, առնայ որ սքանչելի օ-
դէն օգտուելով, մեր մարդիկը ցրուեր են
մարգագետինին չորս կողմը: Դեռ շատ կա-
նուխ էր. ընդհանրապէս իրիկուան ժամը
հինգին ատենները կանգ կ'առնէինք, հետեւ-
եալ արեւածագին կարենալ մեկնելու համար:
Շատ չանցած, Միս Մօրրիսին հանդիպեցայ:
Ձիէն վար իջայ իսկոյն և զայն սանձէն բռն-
եալ քաշելով մօտեցայ ծաղկատի աղջկան,
երջանիկ զգալով ինքզինքս, որ միամիտակ կը
գտնուէր անոր հետը, նոյն իսկ խիստ կարճ
ժամանակի մը համար: Հարցուցի իրեն թէ
ինչո՞ւ համար առանց ծնողքի ու առանց ծա-
ռայի, ձեռնարկած էր անանկ տաժանելի
ճամբորդութեան մը որ ամենէն հզօր մար-
դերը անգամ ուժաթափ ընելու կարող էր:

— Հաւատացէք որ, ըսի իրեն, մեր կա-
րաւանին մէջ չէի ընդուներ ձեզի, եթէ ճամ-
բորդութեան առաջին օրերուն, Մօրքուր Էթ-
քինսի աղջիկը կարծած չըլլայի ձեզ: Հիմա,
ա՛լ շատ ուշ է ետ դառնալու համար: Բայց
պիտի կրնա՞ք գիմանալ անուշիկ զաւակս:
Ձէ՞ք սկսած արդէն իսկ խոնջէնք զգալ այս
դժնդակ կիսանքէն:

— Անոր դժնդակ ըլլալիքը գիտէի արդէն,
պատասխանեց առանց վեր վերցնելու իր կա-
պոյտ ու խոհուն աչքերը: Բայց պարտաւոր էի
մեկնել և հիմա չեմ կրնար պատմել թէ որ-
չա՞փ ուրախ եմ, այլ ևս ետ դառնալ կարելի
չըլլալուն համար: Հայրս Քալիֆօրնիա է և
հօրն հրուանդանին ճամբով ինծի խրկած մէկ

նամակէն իմացայ որ քանի մը ամիսէ ի վեր
տեղեկէ վարակուած, հիւանդ պառկած է ե-
ղեր Սաքրամէնթօի մէջ: Խեղճ հայրիկ, այն-
չափ վարժուած էր՝ դիւրհանգստի պայմաննե-
րուն և իմ փութկոտ հոգատարութիւններուս
... և ըսել թէ միմիայն իմ սիրուս եղաւ
այդ ոսկիի երկիրը գնաց: Չեմ գիտեր որ նո-
րէն ողջ առողջ պիտի գտնա՞մ զինքը: Բայց
իր քով փութալով՝ ինծի անանկ կուգայ որ
պարտքս միայն կատարած կ'ըլլամ կոր:

Այս տեսակ խօսքերու ոչինչ կարելի էր
պատասխանել, մանաւանդ ալ որ, որ և է
գլխողութիւն զոր կարենայի ընել Լիլիէնին,
իր այդ ձեռնարկին նկատմամբ, շատ ուշ
մնացած պիտի սեպուէր: Իր հօրը վրայ աւելի
ճշգրիտ մանրամասնութիւններ ուղեցի: Սի-
բով հաղորդեց զանոնք ինծի: Հոտ իմացայ
որ Մր. Մօրրիս, Միացեալ-Նահանգներու ա-
մենէն բարձր դատարանին, Գերագոյն Ատ-
եա՞ին անդամ եղած էր ատենով. որ իր դիր-
քը ու ինչքը կորսնցուցած և Քալիֆօրնիա
գացած էր նոր հարստութիւններ դիզելու
յոյսով, զանոնք բերելու համար իր աղջկանը՝
զոր իր կեանքէն աւելի կը սիրէր և զայն իր
ընկերային նախկին դիրքին մէջ վերահաստա-
տելու համար: Սաքրամէնթօի վատառողջ
հովիտին մէջ տեղեկ բռնուեր էր և գիտնա-
լով անոր անբուժելիութիւնը, Լիլիէնի խըր-
կած էր իր վերջին օրհնութիւնը: Սա հապճե-
պով ծախեց ինչ որ հայրը ձգած էր իր քովը,
մեկնած ատեն, և որոշեց անոր քով փութալ:
Նախ կ'ուզէր ծովով ճամբորդել, բայց մեր
մեկընդմէջ երկու օր առաջ, մէկէն ի մէկ
Մօրքուր Էթքինսի հետ հաստատած ծանօ-
թութիւնը պատճառ եղաւ որ իր ծրագիրները
փոփոխէ: Մօրքուր Էթքինս Բիլի Թէնըսին
էր և բարեկամներս Արքանշասի մէջ իմ բ-
րած յանդուգն արշաւանքներուս պատմու-
թիւններովը անոր գլուխը տարած էին. անոր
գոված ու պարճեցած էին տափաստաններու
կեանքէ ունեցած փորձառութիւնս և տկար-
ներու մասին տաժած հոգածութիւնս, զոր
ես պարզ պարտականութիւն մը միայն սե-
պած եմ ինծի: Բարի կնիկը, զմայլելի գոյնե-
րով նկարագրած էր զիս Լիլիէնին. ան ալ, ա-

ռանց վարանելու, եկած միացած էր կարաւանին: Թերեւս այն շահագրգռութիւնը զոր Միս Մօրրիս ցոյց տուաւ ինծի ճամբորդութեան առաջին օրէն, պէտք էր վերադրել քիչ մըն ալ Մօրքուր էթթինսի այդ չափազանցուած գովեստներուն, որ նոյն իսկ ազնուական սերունդէ ըլլալս կը հաւաստէր:

—Ապահով եղէք որ, ըսի իրեն, երբոր իր կեանքին գաղտնիքը վստահեցաւ ինծի, կարաւանին մէջ ոչ ոք պիտի վնաս մը հասցընէ ձեզի, և ամէն տեսակ խնամք անպակաս պիտի ըլլան ձեր վրայէն: Դաւով ձեր հօրը, բնաւ հոգ մի՛ ունենաք այդ մասին: Քալիֆօրնիսն աշխարհի ամենէն առողջաւէտ երկիրներէն մէկն է և հոնտեղի տենդերը մահացու չեն: Եւ սակայն, եթէ երբեք այդ կարգի դժբաղդութիւն մը պատահի ձեզ, վստահ եղէք որ մինակ չի պիտի մնաք աս աշխարհիս երեսը, որչափ ատեն որ ես ողջ ըլլամ: Աստուծոյ օրհնութիւնը անպակաս ըլլայ քաղցրիկ դէմքիդ վրայէն:

—Շնորհակալ եմ, հրամանատար, պատասխանեց յուզուած:

Սիրտս ուժով կը զարնէր. այն ատեն քիչ մը տեղ միասին քալեցինք լռիկ: Խօսակցութիւնը, աւելի ոգեւոր, վերսկսաւ և ոչ ոք պիտի կրնար գուշակել որ, մեր գլուխներուն վերեւը տարածուող պայծառ այդ երկինքը օր մը ամպերով պիտի մթաքնէր:

—Ինծի կուգայ հոս որ ամէն մարդ բարեացակամ է ձեզի նկատմամբ, անանկ չէ՞, Միս Մօրրիս, հարցուցի նորէն, առանց կասկածելու որ այս հարցումս՝ առաջին վիշտս պիտի ըլլար:

—Օհ, ա՛յո, ամէն մարդ, Մօրքուր էթթինս, Մօրքուր Կրօզլընըր, Հէնրի Սէմիսընն ալ:

Մեր երկուքին միջեւ Սէմիսընի այս անակնկալ երեւումը սիրտս կձեց:

—Հէնրի ջորեպանին մէկն է, պատասխանեցի կտրուկ կերպով մը և աւելի աղէկ կ'ընէ եթէ իր վակոններովը զբաղի:

Բայց, Լիլիէն որ իր սեպհական մտածումներուն հոսանքին էր անձնատուր եղած, չի նշմարեց ձայնս յանկարծական փոփոխութիւնը և յարեց, կարծես ինքնիրենը խօսելով.

—Պարկեշտ սիրտ մը կը կրէ. կեանքիս միջև վերջը երախտապարտ պիտի մնամ իրեն:

—Միս Մօրրիս, (գրեթէ տմարդօրէն խօսելու վրայ էի) եթէ ուղէք նոյն իսկ ձեռքերնիդ կրնաք նուիրել իրեն: Ինչ որ սակայն ինծի զարմանք կը պատճառէ, աս է որ, այդ տեսակ պարագայի մը մէջ, ինծի կը գտնաք ձեզի մտերիմ խորհրդակից առնելիք մարդ: Անուշիկ աղջիկը, զարմացած երեսս նայեցաւ և չի պատասխանեց: Սառուցիկ լռութիւն մը տիրեց մէջերնիս: Այլ ի՛նչ ըսելիքս չէի գիտեր, սիրտս մէկէն ի մէկ դառնութիւնով ու բարկութիւնով լեցողեցաւ թէ՛ ա՛նոր և թէ՛ նոյնիսկ ինքզինքիս դէմ: Նախանձը կը վառէր հոգիս, բայց կարելի չէր ինծի կռիւի քաշել այդ մարդը: Շատ շանցած, կացութիւնը անտանելի դարձաւ, որոշեցի խտտափոյթ կերպով հեռանալ Լիլիէնի քովէն:

—Մ'նա՛ք—բարով, Միս Մօրրիս, ըսի իրեն չոր ձայնով մը:

—Երթաք—բարով, պատասխանեց ձայնին մէջ թեթեւ տրտմութիւնով մը և գլուխը անդին դարձնելով, իր վճիտ աչքերէն ժայթքող երկու արցունքները սքօղելու համար: Նորէն ձի հեծայ և քառատրոսի մեկնեցայ հոն՝ ուրկէ տապարի հարուածի ձայներ կուգային և ուր՝ Սէմիսըն, ինքն ալ բամպակենի մը կը տապալէր: Բայց, հազիւ քանի մը վայրկեան անցած էր անկէց ի վեր, երբ անսահման կսկիծ մը կը պատէր հոգիս և կարծես կը զգայի Լիլիէնի երկու արցունքները, որոնք սրտիս վրայ կ'իյնային: Դարձուցի ձիուս գլուխը. և իրմէն բաժնուած ատենէս շատ աւելի արագ կերպով իր քովը իրութացի:

—Ինչո՞ւ կուլաք, Միս Մօրրիս:

—Օհ, մեծաւոր, գիտեմ որ ազնուական ընտանիքէ էք դուք: Մօրքուր էթթինս ըսաւ ինծի ատիկա... և այնքան բարի էիք ինձ նկատմամբ...

Ամէն ջանք կ'ընէր իր արցունքները զրսւնելու համար, բայց չէր յաջողեր և նոյնիսկ ըսելիքը չիկրցաւ աւարտել, ինչու որ հեկեկանքները խղիւղեցին իր ձայնը:

(Շարունակելի)

Արժօնատէր Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ

Տպագրութիւն ԱՐԵՎԻԼԻՔ Օրագրի

LA CONFIANCE



ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵԱՆՔԻ ԴԷՄ

Ապահովագրական այս ընկերութիւնը, որ հաստատուած է ու կը գործէ Ֆրանս. Կա-
նաւարութեան ֆոնդոյին ներքեւ, երաշխաւորեալ դրամագլուխ ունի՝ հրդեհի ճիւղին հա-
մար 56,000,000 ֆր. եւ կեանքի ճիւղին համար 36,000,000 ֆր.:

ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍ մէկն է Եւրոպայի ամէնէն պատուաւոր եւ ամէնէն վստահելի ապա-
հովագրական մեծ ընկերութիւններէն, եւ ուր որ մասնաճիւղ հաստատած է՝ միշտ գոհ
ձգած է իր բոլոր յաճախորդները, իր կատարեալ ուղղամտութեամբ եւ կանոնաւոր գոր-
ծառնութիւններով:

Այս վաղեմի ընկերութիւնը մեծ վարկ կը վայելէ ամէնկողմ. եւ իր գործառնութեանց
ու վստահելիութեան վրայ զաղափար մը տալու համար թուենք մէկ քանին այն հան-
րածանօթ հաստատութիւններէն, որոնք ապահովագրուած են ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍի:

Ֆրանսայի նահանգներու եւ գաւառներու կարգ մը պաշտօնատուներէն զատ, Բարի-
զի՝ Օբէրա, Վօտվիլ, Նուվօթէ, Ամպիկիւ, Ֆօլի-Տրամաթիք եւայլն թատրոնները, նաեւ
Պօստոյի, Թուլուզի, Լիոնի, Մարսիլիայի, Նանդի, Նիսի, Ալճէրիոյ, Բուէնի, եւ ուրիշ
տեղերու մեծ թատրոնները:

Պօն Մարշէն, Լուվրի վաճառատուները, Բիկմալիոնը, Բրէնթանի, Պէլ-Ժառաիքիէ-Ռի,
Օթէլ ար Վիլի եւ Սամարիթէնի մեծ վաճառանոցները:

Թրանսպիւնիթիք, Հալլը-Մարսիլիա նաւարկութեան, Մովային Փոխադրութեանց,
Ֆրանսական Թրամուէյներու, խնայողական երկաթուղիի ընկերութիւնները:

Մասնաւորապէս ուշադրութեան առնուելիք պարագայ մըն է որ ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍ ընկե-
րութիւնը, իր Կազմական կանոնագրին համաձայն, պարտաւոր է ամէն վեց ամիսը անգամ
մը իր ելմտական կացութիւնը ենթարկել Ֆրանսայի Առեւտրական Նախարարութեան ըն-
նութեանը. նոյնպէս Սէնի քաղաքապետութեան, Բարիզի Առեւտրական Սենեակին եւայլն:

Ընկերութեան դրամատունն է Քրէտի Լիօնէն:

Սոյն ընկերութեան Պոլսոյ կողմի գործակալութիւնը ստանձնած է՝ մեր հրապարակին վրայ
իր պատուաւորութեամբ ծանօթ

ԳԱՌՆԻԿ ԱՃԱՌԵԱՆ

Որուն պէտք է դիմել՝ թէ՛ հրդեհի եւ թէ՛ կեանքի ճիւղին վերաբերեալ ապահովագ-
րութեանց կամ տեղեկութեանց համար: Գ. Աճառեան կը վարէ նոյնպէս Compagnie
générale d'Assurances Maritimes ծովային ապահովագր. ընկերութեան Պոլսոյ կողմի գոր-
ծակալութիւնը:

Հասցէ.— Պոլիս, Մահմուտ փաշա, Պէոյիւք Եըլտըղ խան, թիւ 14, Լա Գօնֆիանս ա-
պահովագր. ընկ. Գրասենեակը:

Գառնիկ Աճառեան կը վարէ նաեւ, իր անձնական սեփականութիւնը եղող ան-
թիւի վաճառատուն մը, Պոլիս, Շուկայ, Մուհաֆազաճըլար, թիւ 46, ուր գաւառներէն
առուծախի յանձնարարութիւններ կ'ընդունուին:

Յ Ո Ւ Շ Ա Տ Ե Տ Ր

Յ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ

1904 ՏԱՐԻՈՅ ՀԱՄԱՐ

(AGENDA INTERNATIONAL)

Թուրքերէն, Հայերէն, Ֆրանսերէն եւ Յունարէն լեզուներով

Յառաջիկայ 1904 տարւոյ համար նախորդ տարիներէն աւելի ճոխ և աւելի խնամով պատրաստուած և արդէն հրատարակուած է

Պարզ լարակալով	3	դր.	{ 25 օրինակէն աւելի գնող- ներուն զոհանցուցիչ գնոց
Բնօր լարակալով	5	»	
ՈՍԿԵԶՈՐ ՓԱՌԱԿԱԶՄ	8	»	

Կը գտնուի Պոլսոյ եւ գաւառաց բոլոր գրավանդներու եւ քոթաւանդներու ֆով: Հրատարակիչն է

Յ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ, ՊԱՅՊԼ ՀԱՈՒԶ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՎԻԵՆՆԱԿԱՆ ՄԵԹՈՒՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ
Ի ԲԱՆԿԱԼԹԻ
47րդ ՏԱՐԵՇԵՐՋԱՆ

Վարժարանն հաստատուած է 1857ին, նպատակն է՝ աշակերտաց տալ կրօնական, բարոյական եւ գիտական կրթութիւն մը: Վարժարանի վարչութիւնը՝ Վիեննայի Միթթարեանց ձեռքն է: Ուսուցչական մարմինը (corps enseignant) որ կը բաղկանայ Միթթարեանց եւ վիպեայ արտաքին ուսուցիչներէ, պիտի կազմեն այս տարի 24 հոգի: Ուսմանց ծրագիրն է՝ արդի երկրորդական դպրոցներու (école secondaire moderne) յատուկ յառաջագիւրը, որ կը համապատասխանէ գերմանական ռեալական դպրոցին (Realschule) յառաջագրին. բայց ըստ կարի յարմարցուած է այս ծրագիրը միջավայրի պիտոյից: Վարժարանիս կատարեալ ընթացքն աւարտող աշակերտները կրնան շատ դիւրութեամբ եւ պուանց ֆինուքեան Եւրոպայի ո եւ է բարձրագոյն վարժարանն յաճախել՝ ուսմունքը շարունակելու համար (ինչպէս ունինք աշակերտներ ի վիճեմա, Զուիցերիա եւն.) եւ կամ կրնան վաճառականութեան ձեռնամուխ ըլլալ: Աւանդուած լեզուներն են՝ Հայ. Տէկ. Գաղղ. Գերմ. եւ Անգլ. (վերջին 2 տարիները): Գաղղիներէն լեզուն գործնականապէս սորվելու համար՝ աշակերտները պարտաւորեալ են միշտ նոյն լեզուն խօսելու, եւ իրենց վրայ պիտի հսկեն

գաղղիացի Մարիսդներ, զորոնք յաշկապէս բերել տուա վարչութիւնս Բարիզէն: Այս տարի 5 պիտի ըլլայ ասոնց թիւը: Ամէն ամիս ծնողաց կը շրջուի համեմատական ամսացուցակ մը, որուն մէջ մանրամասն կը նշանակուի աշակերտին բարոյական եւ ուսուցչական վիճակը, իւրաքանչիւր դասի մէջ առած նիշերը եւն.: Վարժարանս կը գտնուի ընդարձակ ծառայից պարտէզի մը մէջ. ունի իր յատուկ բժիշկն ու դեղարանը: 1903-1904 դպրոցական տարին պիտի սկսի Սեպտեմբեր 1/14 Բշ. օրը: Դպրոցամուտի ընունթիւնները պիտի կատարուին Օգոստոսին 29ին եւ 30ին, իսկ դասերը կը սկսին կանոնաւորապէս Երկուշ. օրը Սեպտ. 2ին: Հրատարակուած է վարժարանիս 5րդ տեղեկագիրը: Վարժարանիս նկատմամբ ընդարձակագոյն տեղեկութիւններ ուզողը, թող դիմէ վարժարանի վարչութեան:

Թուակ սարեկան ամենայն ծախիւի
» գիւետօրիկներու համար 30 օսմ. ոսկի
» սարեկան ամենայն ծախիւի
» ցեղեկօրիկներու համար 20 օսմ. ոսկի
» սարեկան ամենայն ծախիւի
» արտաքիններու համար 10 օսմ. ոսկի
վարիչ

Հ. ԳԱԲՐԻԷԼ Վ. ՄԷՆԵՎԻՇԻԱՆ

Կ. Պոլիս, Բանկայի
P. GABRIEL Dr. MENEVICHIAN
Constantinople, Pancaldi

Սոյն հանրածանոթ շաքարավաճառը՝ Բերայի շիտակ ճամբան, թիւ 54, իր խանութը ընդարձակած ու ճոխացուցած է, թէ՛ իբրեւ բաքիսըռի եւ թէ՛ իբրեւ շաքարավաճառ, աւելի գոհ ձգելու համար իր բաղմաթիւ յաճախորդները։ Ամրան եղանակին մէջ, համեղ պաղպաղակներու պէսպիսութիւն մը կայ ցորեկ եւ գիշեր։

ՀԱՃԻ ՍԱՐԻՄ Օսմ. շաքարագործը ճոխ մթերք մը ունի հարսանեկան շաքարեղէններու, ընտիր տեսակէ, ու մասնաւորապէս յանձն կ'առնէ հարսանեկան հանդէսներու առթիւ ո՛չ միայն անոնց հայթայթումը՝ այլ նաեւ մատուցումը եւ սպասարկութիւնը տուներու մէջ։

Միակ մասնաճիւղ, Ղալաթիա, Թօփճըլար Ճատտէսի, Թ. 101։

13-30



Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը սենեկայ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց եւ տաղտուկի աղբիւր մըն է։ Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

Ս Ի Ն Կ Է Ր

ՀԱՅԹԱՅԹԻԶ ԿԱՅՍ. ՊԱՆԱՏԱՆ

The Singer Manufacturing Cie.

Ջեմի, ումի ու ումի եւ ձեմի միանգամայն մեկնաներ կը գտնուին։

մեքենան լաւագոյնն է. սոյն մեքենան ամենէն աւելի կատարելագործուածը, հաստատունը եւ դիւրագործածելին ըլլալուն՝ բովանդակ աշխարհի մէջ՝ ամէն ոք Սինկերի մեքենաները կը գնէ։

Սինկերի մեքենաները կը ծախուին միմիայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց մէջ։

ՍԻՆԿԵՐԻ
ՄԵՔԵՆԱՆԵՐԸ

ԲԵՐԱՅ.

1. Մեծ փողոց, Պօն Մանչէի դէմ, Թ. 343 եւ 343 կրկին
2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ.

ԿՍ.Լ.Ա.Թ.Ա.

1. Սինկեր խան, Թիւնէլին ետեւը.
2. Գարաքէոյ, Թրամվէյին կայարանին դէմ.

ՊՈԼԻՍ.

1. Սուլթան Համամ, Թ.
2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ, Թ. 13.

ՍԿԻՒՏԱՐ

Չարչը. Պոյու, Թ. 120.

Դասերը եւ նորոգութիւնք ձրի.

Կասաբեալ Երաւաւորութիւն։

Մասնաճիւղեր գաւառաց բոլոր փաղափներուն մէջ։

Սինկերի Ընկերութեան կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, Թ. 343 եւ 343 կրկին, Սարգիս Պէյ Տիւզդուլուի տունը։

ՖԵՆԻՔՍ ՕԹՐԻՇԻԷՆ

ԿԱՅՍ. ԹԱԳ. ԱՌԱՆՁՆԱՇՆՈՐՀԵԱԼ ԱՊԱՀՈՎԱԳՐ. ԸՆԿ.

Հրդեհի եւ կեանքի (Ի ՎԻԷՆՆԱ)

ՊԱՏՈՒԱԿԱԼ ՆԱԽԱԳԱՀ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Ն. Ա. Բ. ԳՈՐԳՍ ԼՈՒՐ ՏԵ ՊԱՎԻԷՌ

ԼԱ ԷՍԹՐԵՅԵԱ

Ապահովագր. ԸՆԿ. ընդդեմ հրդեհի (Ի ՔԱՐԹԱՎԷՆ)

ԱԼԼԵԱՆՑԱ

Շուկային ապահովագր. ԸՆԿ. (Ի ՃԵՆՈՎԱ)

Սոյն ընկերութեանց Դրամատունն է ի Կ. Պոլիս, Քուէսի Լիօնի

Ընդհ. եւ լիազոր ներկայացուցիչ Թուրքիոյ

Գ. ՅԵՐՄԱՅԵԱՆ

Գրասենեակ, Պոլիս, Հանօբուլօ խան, Թ. 52-53-54-55-56

ՆՈՐԱԳՈՅՆ

ԵՒ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾԵԱԼ

Փարիզեան գեղեցիկ տպագրութեամբ
հրատարակուած

ՄԵԺ ԲԱՌԱՐԱՆ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

ԳԱՂԻԵՐԷՆ--ՀԱՅԵՐԷՆ

Գ. ՆԱՐ-ՊԷՅԻ

Գին երկու հատորին միասին դահկ. 120

Վաճառման կեդրոնացեղին է

ԲԻԻԶԱՆԴԵԱՆ ԳՐԱՏՈՒՆԸ

Ղալաթիա Սեդրոս խան Թիւ 5

8-10

Գ. Յ. ՅԵՐՄԱՅԵԱՆ

ՅԱՆՁՆԱԿԱՏԱՐ

ՍԱՄՍՈՆ

Կը ստանձնէ վաճառականական պիտոյից,
սպազրական գործերու պատրաստութեան
հոգը.

Գին ԴԻԻՐԱՄԱՏՉԵԼԻ

Մաքուր եւ արագ գործօնեութիւն.

Արժէք կանխիկ. 50% զեղչ.

Ծանօթ վաճառականաց, ապառիկ.

Առաջին փորձը կը վստահեցնէ ձեզ ամէն
մասամբ:

Մանրամասնութեանց համար դիմել

Կ. Յ. ՏԷԻՐՄԵՆՃԵԱՆ

ՍԱՄՍՈՆ

ՌՈՊԷՐԴ ՔՈԼԷՃ

Վարժարանիս յառաջիկայ տարեշրջանը
պիտի սկսի Սեպտ. 2/15: Կարգադրութիւն.
ներ եղած են նոր դիւրութիւններ տալու
վաճառականական ուսմանց համար: Մնայուն
բժիշկ մը՝ աշակերտներու առողջութեան,
մարմնամարզներուն ու խաղերուն, ինչպէս
նաեւ վարժարանին ընդհանուր առողջապա-
հական վիճակին վրայ կը հսկէ: Նախորդ
տարուընէ սկսեալ՝ բացուած է նաեւ փոքր
տղոց յատկացեալ նոր շէնքը, ուր կ'ընդուն-
ուին մինչեւ տասը տարեկան աշակերտներ:

8-12

ԼԵԻՈՆ Թ. ԹԵՐԶԵԱՆ

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Վերջեալ Բարիգու բժշկական վարժարանէն
Նախկին chef de clinique Ֆրանսայի
Ատամնաբուժական Վարժարանին, Կ'ընդունի
ամէն օր իր բնակարանը՝ Բերա, Մեծ-փողոց
Թ. 407 (Եանիի գաիւջրատան դէմ):

8-10